

34(356)

30.11.2013

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

# ԼՍԱՐ

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ՄԱՐԱԹՈՆԸ՝ ԶԵՌԸ ՄԻՇՏ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՐԿԵՐԱԿԻՆ ՊԱՇՏՆՈՒ ՄԻՋՈՅ

Հաջողությամբ ավարտվեց հերթական հեռուստամարաթոնը: 1996-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացված դրամահավաքում հանգանակվել էր 4,2 միլիոն դոլար, որը հետո կրկնապատկեց ամերիկահայ հայտնի մեծահարուստ Քրոջ Քրոջորյանը: Տարեցտարի այդ թիվն ավելացավ, և 2013 թվականին արդեն հանգանակված գումարը կազմեց ավելի քան 22 միլիոն դոլար:

Հատկանշական է, որ անցած տարիներին կազմակերպված հեռուստամարաթոնները (բացառությամբ 1998 թվականը, որովհետև այդ տարում համազգային դրամահավաք չի կազմակերպվել) նվիրված են եղել նաև Արցախի համար կենսական կարևորություն ունեցող խնդիրների լուծմանը՝ ընդգրկելով կենսապահովման տարբեր ոլորտներ: Դժվար է նախապատվությունը տալ որևէ բնագավառի, քանզի այն բոլոր ծրագրերը, որոնք համազգային դրամահավաքի միջոցով կենսագործվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, ունեցել են և ունեն ռազմավարական խոշոր նշանակություն:

Բացառություն չէ նաև այս տարի անցկացված դրամահավաքը: Հանգանակված գումարներով, մասնավորապես, Վարդենիս-Մարտակերտ ասֆալտապատ ճանապարհի կառուցումը կարևոր է ոչ միայն նրանով, որ Արցախը Հայաստանին է կապվում և մի հուսալի ու բարեկարգ ճանապարհով: Պակաս կարևոր չէ այն հանգամանքը, որ նորակառույց ճանապարհը զգալիորեն կրճատում է ԼՂՀ-ն Վրաստանի միջոցով արտաքին աշխարհին կապող ուղին, որի տնտեսական նշանակությունը նույնպես դժվար է գերազանահատել: Մասնագետները միաժամանակ շեշտում են Վարդենիս-Մարտակերտ ճանապարհի կառուցման զբոսաշրջային նշանակությունը, իսկ զբոսաշրջության զարգացումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հիրավի՝ գրավիչ հեռանկարներ ունի: Այսինքն, որ տեսանկյունից էլ գնահատելու լինենք, Հեռուստամարաթոն-2013-ի իրական նպատակը լիարժեք արդարացված է:


Հեռուստամարաթոնների արդյունքը, սակայն, ճիշտ չի լինի գնահատել միայն դրանց սոցիալ-տնտեսական նշանակությամբ: Համազգային դրամահավաքը ի սփյուռս տարածված հայ ժողովրդին վերստին համախմբելու միջոցառում է, որտեղ շեշտվում են այն մարտահրավերները, որոնք այսօր կանգնած են հայրենիքի առաջ: Արտերկրում բնակվող մեր հայրենակիցների համար միշտ չէ, որ տվյալ մարտահրավերները տեսանելի են, և նրանք ծավալուն այդ ակցիայի ընթացքում ծանոթանալով հայրենիքում առկա սոցիալ-տնտեսական ու կրթաշահութային խնդիրներին՝ կարողանում են անձամբ մասնակցել դրանց լուծմանը:

Անչափ ուրախալի է, որ հայրենասիրական նման նախաձեռնությանը մասնակցում են նաև սփյուռքահայ երեխաները: Երանց մասնակցությունը հեռուստամարաթոնին՝ բնավ էլ նյութական հետամտություն չունի, այլ արժևորվում է ամենից առաջ սեփական ազգի հանդեպ սիրո ու պատասխանատվության զգացում սերմանելու փաստով:

Համազգային դրամահավաքն աշխարհի տարբեր ծագերում ապրող միլիոնավոր հայերի ձեռքը միշտ հայրենիքի զարկերակին պահելու արդյունավետ միջոց է, և այս տեսանկյունից, բացի հանգանակված գումարի չափից, խիստ կարևոր է նաև հայրենասիրության անվերապահ դրսևորումը: Իսկ հայրենասիրությունը, ինչպես հայտնի է, չափման սանդղակ չունի: Սա է, թերևս, հեռուստամարաթոնի շոշափելի արդյունքը:

«ԼՍԱՐԱՐ»

ՀԵՌՈՒՍԱՄԱՐԱԹՈՆ 2013  
TELETHON 2013



## ՀԱՎԱԿՆՈՏ, ԲԱՅՑ ԵՎ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Լրագրողների խնդրանքով, պաշտոնավարման 100 օրվա կապակցությամբ Արցախի պետական համալսարանի ռեկտոր Մանուշ Մինասյանը նոյեմբերի 26-ին մամուլի ասուլիս տվեց:

Հանդիպման սկզբում շնորհակալություն հայտնելով լրագրողներին նախաձեռնության համար, նա պատրաստակամությամբ հայտնեց պարբերաբար հանդիպել նրանց հետ՝ քննարկելու խնդիրներ, լսելու նրանց առաջարկությունները: Ինչպես ինքն է կարծում, ԱրՊՀ-ն որպես հանրապետության մայր բուհ, սոցիալական մեծ օրգանիզմ, իր առաքելությամբ իրականացնում գործում ունի նաև լրատվամիջոցների աջակցության կարիքը, քանզի ապագա սերնդի դաստիարակության գործում յուրաքանչյուրն ունի պատասխանատվության իր մասնաբաժինը, և համատեղ աշխատանքից ընդհանուր գործը միայն կշահի:

Մ. Մինասյանը նախ ներկայացրեց ծրագրային հիմնադրույթները, որոնք ընկած են լինելու իր գործունեության հիմքում, ապա՝ կատարված աշխատանքները, իսկ վերջում պատասխանեց լրագրողների հարցերին:

ԱրՊՀ-ն, ինչպես աշխարհի մյուս համալսարանները, գտնվում է արագ փոփոխությունների և 21-րդ դարից թելադրված տնտեսական համաշխարհայնացման, սոցիալական, էկոլոգիական, ժողովրդագրական մարտահրավերների ժամանակաշրջանում: Այս ամենից ելնելով ու նաև հաշվի առնելով, որ ԼՂՀ-ում կրթության առաջանցիկ զարգացումը որդեգրվել է որպես պետականության կայացման կարևոր գերակայություն, ԱրՊՀ-ն խնդիր է դրել կրթել ու դաստիարակել այնպիսի քաղաքացիներ, որոնք պետք է ունակ լինեն ապրելու և գործելու ժողովրդավարական հասարակությունում, ի վիճակի վարելու բեղմնավոր գործունեություն: Ըստ ռեկտորի՝ համալսարանի գործունեության հիմքում ընկած է լինելու հետևյալը. կրթական ծրագրերի արդիականացում, գիտական և նորարարական գործունեության, կադրային ներուժի զարգացում, ենթակառուցվածքների արդիականացում, սոցիալական համագործակցության ընդլայնում, ուսանողների հետ տարվող աշխատանքային ծրագրերի համար հիմք ստեղծող ֆինանսական կայունություն ու զարգացում:



կան գործունեության, կադրային ներուժի զարգացում, ենթակառուցվածքների արդիականացում, սոցիալական համագործակցության ընդլայնում, ուսանողների հետ տարվող աշխատանքային ծրագրերի համար հիմք ստեղծող ֆինանսական կայունություն ու զարգացում:

Կրթական գործունեության արդիականացման տակ նկատի է առնվում այն, որ համալսարանը պետք է ձգտի լինել տարածաշրջանում կրթական չափորոշիչների առումով առաջատար: Ռեկտորն այս տեսակետից կարևորեց համալսարանի մասնագիտությունների ցանկի վերանայումը. հեռանկար չունեցող կամ համալսարանի իրական հնարավորություններից վեր մի շարք մասնագիտություններ պետք է կրճատվեն: Այդ համատեքստում նա

անդրադարձավ շրջանավարտների՝ աշխատանքով ապահովվածության խնդրին, ինչի առնչությամբ նախատեսվում է պարբերաբար անցկացնել հանրապետության խոշոր գործատուների մոտ մասնագիտությունների պահանջարկի համալիր ուսումնասիրություն և արդյունքները դնել բուհի մասնագիտությունների հիմքում:

Մյուս խնդիրը Մ. Մինասյանը համարեց ուսանողների ակադեմիական առաջադիմության գնահատման մեխանիզմների պարբերաբար կատարելագործումը:

Հաջորդ վերաբերում է գիտական ներուժի զարգացմանը, որը, ռեկտորի կարծիքով, թերևս, ամենադժվարն է: Նա խոսեց դասախոսական կազմի՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածության աճի ապահովման, նրանց գիտական աշխատանքների առևտրայնացման գործընթացի, գիտություն-տնտեսություն ամուր և հետադարձ կապի ստեղծման մասին, այսինքն՝ գիտությունը ոչ միայն տա արդյունք, այլև տնտեսությունը ներկայացնի պահանջարկ, որպեսզի գիտական արդյունքները կարողանան իրացնել այնտեղ:

2

## ՍԵՄԻՆԱՐ-ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնը անցկացրեց շրջանների հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների սեմինար-խորհրդակցություններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման կարգի վերաբերյալ:

Նոյեմբերի 21-ին սեմինար-խորհրդակցություն անցկացվեց Մարտունում: ԳՊԿ տնօրեն Յու. Քարամյանը տեղեկացրեց, որ նպատակը համատեղ քննարկման արդյունքում ճիշտ աշխատանք և ուսուցման ճիշտ ձև ընտրելն է: Նա խոսեց հանրակրթական դպրոցներում ներառական կրթության կազմակերպման մասին, ըստ որի՝ վերջինս ենթադրում է ոչ միայն ընդհանուր հայեցակարգի սահմանում և ընդունում, այլև համապատասխան գործողությունների հստակ պլանավորում: Ներառական կրթության կազմակերպման գործընթացը պայմանականորեն բաժանվում է երկու փուլի՝ նախապատրաստական և իրականացման: Նախապատրաստական

փուլում ուսումնական հաստատության տնօրենը պետք է ստանա ներառական կրթություն իրականացնելու համար ԼՂՀ ԿԳ նախարարի թույլտվությունը, ապահովի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող՝ սահմանված կարգով կրթական կարիքի գնահատման հանձնաժողովի եզրակացության հիման վրա վկայագիր ստացած սովորողների առկայությունը, ինչպես նաև կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներ ու հարմարեցված միջավայր: Վերոնշյալ պայմանների առկայության դեպքում արդեն պաշտոնապես կազմակերպվում է ներառական կրթություն՝ գործողությունների հետևյալ հաջորդականությամբ. ներառական կրթություն կազմակերպելու համար վերապատրաստված մասնագետը դպրոցի բուժաշխատողի հետ ուսումնասիրում է դպրոցի բոլոր սովորողների բժշկական գործերը և առանձնացնում այն սովորողների գործերը, ովքեր ունեն մտավոր զարգացման, լեզվական, լսողական, տեսողական, հոգեբանա-

կան, հենաշարժական կամ այլ խնդիրներ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական դպրոցներում ընդգրկելու, նրանց կրթությունը կազմակերպելու, դասազրբերով և հատուկ զբեմական պիտույքներով, գիտամեթոդական նյութերով ապահովելու կարգի մասին ծավալուն տեղեկատվությամբ հանդես եկավ ԼՂՀ ԳՊԿ կրթական կարիքի գնահատման բաժնի պետ Հասմիկ Եսայանը:

Այնուհետև եղան ակտիվ ու անմիջական քննարկումներ: Սուսի դպրոցի տնօրեն Մանուշ Վանյանը հայտնեց, որ դպրոցում կան խուլ ու համր տնային ուսուցման երեխաներ, ովքեր բուժվել և դպրոց են հաճախում:

Այսօր այդ աշակերտների ուսուցումն իրականացվում է դպրոցում, այսինքն՝ նրանք անցել են ներառական ուսուցման: Տնօրենի հարցը հետևյալն էր՝ ճի՞շտ են անում, որ այդ աշակերտներին թույլատրում են դպրոց գալ: Հարցի պատասխանը դրական էր:

3

ՕՐԱԳԻՐ

ՄԵՐ ԲՈՒՈՐԻ ՄՈՆԹԵՆ
Նոյեմբերի 25-ին Մոնթեն կղանար 56 տարեկան



Մոնթեի գրքասիրությունը ներկայացրեց հինգերորդից Լուսինե Սահակյանը՝ նշելով նրա սիրած գրքերը՝ Աստվածաշունչ, «Մարդկային կատակեր-գոթյուն», «Ռոբինզոն Կրուզո», «Դոն Կիխոտ», «Կապիտալ», բազմապիսի հանրագիտարաններ: Սակայն 14-ամյա պատանու զգայուն հոգում խոր հետք թողեց Գ. Ֆիլյանի «Հայաստանը և հայերը կամ մի հայի պատմությունը Հայաստանի մասին» գիրքը: Այնուհետև նա մոլեգին հետաքրքրությամբ ուսումնասիրեց Հայոց ցեղասպանության պատմությունը:

Գաղափարական դաստիարակության և գաղափարախոսությունը քարոզելու համար մենք՝ պատմության ուսուցիչներս, ունենք ազգային կերպարների մի ամբողջ աստղաբաշխ: Մոնթեն՝ այդ վառ ցուցող աստղերից մեկը, բյուրեղյա կերպար է, որ իր մեջ ամփոփում է ամբողջ հայոց պատմությունը, ազգային խորհրդանիշների ամբողջությունը, հայ մարտիկի ասպետական քաջությունը, հայ մտավորականի ազնվությունն ու պարկեշտությունը, իր մեջ նախ գինվորին կրող զորավարին, հայոց տառապալից անցյալն ու ապագայի լուսավոր տեսլականը: Երջանիկ են, որ հայոց պատմությունը փառավորվում է այսպիսի հերոսական կերպարներով, և անթաքույց հպարտությամբ են անդրադառնում, որպես բացարձակ հայրենասիրության կերպար մեջբերում կամ ներկայացնում մեր բոլորի սիրելի Մոնթեին:

1975թ. Մոնթեն ընդունվում է Բերկլիի (Կալիֆոռնիա) համալսարան: Համալսարանական տարիները Մոնթեի ոչ միայն բաղաձայն աշխարհայացքի ձևավորման, այլև Հայ Դատին նվիրվելու ժամանակաշրջան էին: Ու թերևս այսպես է ծնվում նրա «Ազգամեծի առաքելությունը հնարավոր կլինի իրականացնել միայն մայր հայրենիքում՝ Հայաստանում» միտքը:

Բերկլիի համալսարանում ուսանելու տարիներին նրա գլխավորությամբ հիմնվում է «Հայ ուսանողական միությունը», իսկ 1978 թվականին նրա նախաձեռնությամբ համալսարանի սրահներից մեկում կազմակերպվեց հայ մշակույթի մոնոլոգների ցուցահանդես: Հարկավ, սա հերոսի՝ ազգային ինքնաներկայացման ու ինքնահաստատման փորձ էր: Ցուցահանդեսի այն բաժինը, որն առնչվում էր Մեծ եղեռնին, Սան Ֆրանցիսկոյում թուրքիայի հյուպատոսի պահանջով համալսարանի ղեկավարության կողմից հանվում է: Ել ուն, եթե ոչ նրան պետք է հաջողվեր Բերկլիի համալսարանում պաշտպանել «Ռուսարտուի ժայռափոր դամբարանները» ավարտաճանք: Նա նույն տարում էլ ընդունվում է Օքսֆորդի համալսարան, սակայն ուսումնառությունը թողնում է անավարտ և շուրջ երեք տարի մասնակցում Լիբանանի քաղաքացիական պատերազմին և Բեյրութի հայկական Բուրջ Համուր թաղամասի ինքնապաշտպանական մարտերին:



Խոստումնալից հայագետը, ով ազատորեն խոսում էր անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն, ճապոներեն, բավականին լավ տիրապետում էր արաբերենին, իտալերենին ու թուրքերենին, կարողանում էր բացատրվել պարսկերեն ու քորերեն, վերջնական վճիռ է կայացնում՝ թողնել գիտությունը և անցնել հայրենիքի պաշտպանությանը: Նրան հաջողվում է կապ հաստատել Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ՀԱԳԲ, ԱՄԱԼԱ) հետ: Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի հետ ունեցած տարածայնությունների պատճառով հեռանում է և հիմնում Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի հեղափոխական շարժումը:

1985թ. նոյեմբերի 27-ին Մոնթեն Փարիզում ձերբակալվում է կեղծ անձնագիր և պայթուցիկ նյութեր պահելու մեղադրանքով ու դատապարտվում բանտարկության՝ պատիժ կրելով մինչև 1989 թվականը: Աշակերտներն այս մասին ցավի զգացումով են խոսում և հպարտությամբ մշում ազատագրության տարիներին նրա՝ հետապաշտան «Իրականություն» գրքում ամփոփված ազգային-ազատագրական պայքարի մտորումների և ուսումնասիրությունների և ուսումնասիրությունների և ուսումնասիրությունների պատճառով կատարված աշխարհայացքի ձևավորման, այլև Հայ Դատին նվիրվելու ժամանակաշրջան էին: Ու թերևս այսպես է ծնվում նրա «Ազգամեծի առաքելությունը հնարավոր կլինի իրականացնել միայն մայր հայրենիքում՝ Հայաստանում» միտքը:

քում ամփոփված ազգային-ազատագրական պայքարի մտորումների և ուսումնասիրությունների մասին: Ազատագրական պատճառակալությունը լրանալուց հետո հայ ազատագրական պայքարի մեծ նվիրյալը զինվորագրվում է Արցախի պաշտպանության սուրբ զործին:

1991 թվականի սեպտեմբերից հայրենասեր զինվորյալը մասնակցում է Արցախի Մանաշիր, Երբեջ, Բուզլուխ, Ղարաչինար գյուղերի ինքնապաշտպանական մարտերին:

1992 թվականի փետրվարից նրան նշանակում են ԼՂՀ Մարտունու շրջանի զորամասի պետ, ապա նաև՝ նույն շրջանի ինքնապաշտպանական ուժերի զորահրամանատար:

Հայրենապաշտ զորավարի հրամանատարությամբ ազատագրվել են զգալի տարածքներ, իսկ 1993 թվականի մարտին նաև նրա մասնակցությամբ նախապատրաստված և հաջողությամբ իրականացված Քարվաճառի ռազմական գործողության արդյունքում հակառակորդից ազատագրվում է կենսական կարևորություն ունեցող այդ շրջանը: 1993 թվականի մայիսից Մոնթեն մարտնչել է Մարտունու շրջանում, իսկ հունիսից ղեկավարել Արցախի շրջանում իրականացվող մարտական գործողությունները:

Աշակերտները նախընտրեցին չխոսել Մոնթեի մահվան մասին ու այդպես էլ չնշեցին նրա վերջին մարտի ու մահվան օրվա մասին: Գերադասեցին լռել և այդ լռության մեջ ամփոփել ասելիքը կամ էլ չհավատալ, որ նա մեր շարքերում չէ: Ավելին, նրանք համոզեցին ներկայից, որ Մոնթեն է խոսում իրենց բերանով, նա է իրենց խոհերի, համոզումներին ու հետաքրքրություններին կիզակետում: Մոնթեի մասին ֆիլմն ավելի շոշափելի դարձրեց նրա ներկայությունը, ավելի ազդեցիկ ու իրական:

Բոլորի համար անակնկալ էր «փոստատարի» այցը, ով բերել էր Մոնթեի անձնական նամակների խուրձը: Այսպես, բոլորը համակուշարդությամբ լսում էին հերոսի ձեռքով գրված նամակների բովանդակությունը: «...ինձի համար երկու հատ շատ կարևոր հարցեր կան... Այս երկու հարցերը իրականացնում ենք իրար հետ շատ կապակցված, և ինձի համար կարելի չէ մեկը կամ մյուսը անտեսել: Այս երկու հարցերը հետևեալներն են. ա) իմ սկզբունքներս, (աշխատանքս և համոզումներս, բ) թագ (Մեղայի-խմբ.) հանդեպ ունեցած զգացումներս»:

Մեկ այլ նամակում նա գրում է. «Եթե մեր ժողովուրդը շարունակեք քաղաքականապես հասունանալ և աշխուժանալ, եթե ընկերակարական և միջազգայնական սկզբունքները ա՛լ աւելի առաջ տանին և եթե շարունակեն զանգուստային ժողովրդավարութանը իրենց որոշումները առնել, թե՛ ապագային Արցախի հարցը պիտի լուծուի, թե՛ մեր հայրենիքը և ժողովուրդի կենսոլորտը պիտի մնա «տիմամիզ» մը ստանայ, որ անձն տեսակետով մեծ օգուտ պիտի ըլլայ բոլորիս: Շատ յստակ է, որ Արցախի ժողովուրդի նախաձեռնությունը ճիշդ, արդար և գիտական համայնավարութան միակ տրամաբանական լուծումն է»:

Նոյեմբերի 25-ին Մոնթեն բոլորին էր, իսկ խրամորթի միջնակարգ դպրոցի աշակերտներից մեկի համար նա սիրունք էր, մյուսի համար՝ քաջության արքայուհի, երրորդի համար՝ ազնվություն ու խիղճ, չորրորդի համար՝ սրբազան նահատակ:

Միջոցառման վերջում աշակերտները հնչեցրին Մոնթեի սիրելի երգը՝ «Գետաշենը» և հերոսի մասին հորինած աղոթքը. «Ռոզ հոգին նրա լուսավորյալ շարունակի հանգիստ թևածել իր սիրած հայրենիքի երկնակամարում», որովհետև մենք բոլորս նրա չճնված զավակներն ենք, նրա երազած ազատ Արցախի զավակները և նրա պես գիտենք ազատության ու անկախության գինը...»

Սիրելի Մոնթե, Արցախը շարունակում է լրացնել հայոց պատմության փառահեղ էջերը, և Քո մտախոհության վերջին էջը երբևէ չի շրջվի...

Արմինե ԱՌԱՔԵԼՅԱՆ
Խրամորթի Գ. Ավանեսյանի անվ. միջն. դպրոցի պատմության ուսուցչուհի

ՀԱՎԱԿՆՈՑ, ԲԱՅՑ ԵՎ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

1 Ըստ նրա՝ այստեղ շատ կարևոր է գիտնականների վարձատրության վերանայումը: Վարձատրության չափը պետք է կախված լինի նրանց գիտական արդյունքից: Պետք է վերանայվեն և բարելավվեն ամենամյա գիտական աշխատանքների համար կազմակերպվող մրցույթները, սկսված ցուցանիսից միջազգային գիտաժողովների կազմակերպումը, ինչպես նաև դասախոսների՝ և որպես համալսարանի ներկայացուցիչ, և անձնական նախաձեռնություններով այս կամ այն գիտաժողովին ներկայացման գործընթացը:

Կադրային ներուժի զարգացումը նույնպես համալսարանի կարևոր խնդիրներից է: Ռեկտորի հանձնարարով համալսարանը պետք է նախաձեռնի լինի իր կադրային բազայի թարմացմանը, ինչպես նաև քայլեր ձեռնարկվեն առկա մասնագետների որակավորման բարձրացման ուղղությամբ: Այսօր համալսարանի հիմնական դասախոսական կազմը 51 տոկոս է, մյուս մասը տարբեր ոլորտներում աշխատող՝ հրավիրված մասնագետներ են:

Կադրային ներուժի բարելավումը ենթադրում է նաև դասախոսների սոցիալական վիճակի բարելավում:

Ենթակառուցվածքների արդիականացումը նշանակում է դասախոսների և ուսանողների համար նպաստավոր պայմանների ստեղծում: Համալսարանն ունի տեխնիկապես հագեցած լսարաններ, սակայն, ռեկտորի կարծիքով, դրանք թիվը քիչ է, պետք է ավելանա համակարգային կենտրոնների և համապատասխան կախավորում ունեցող լսարանների քանակը՝ հատկապես հեռավար ուսուցում կազմակերպելու նպատակով:

Այդ ամենը իրականացնելու համար անհրաժեշտ է, որ համալսարանն ունենա ֆինանսական կայունություն: Ռեկտորը ցավով նշեց, որ վերջին տարիներին ֆինանսական եկամուտների կայունության նվազման միտում է նկատվում՝ կապված ուսանողների թվի նվազման հետ: Նրա հավաստիացմամբ, չնայած դրան, ուսման վարձավճարների ավելացման հարկ չի լինի՝ պայմանավորված բնակչության սոցիալական վիճակով, և հարցը հնարավոր է լուծել պետական բյուջեից համալսարանին հատկացվող միջոցների ավելացման (հիմնականում պետպատվերի հաշվով՝ մեկ ուսանողին տրվող վարձի բարձրացման միջոցով), ինչպես նաև գիտակրթական տարբեր ծրագրերում համալսարանի դասախոսների ներգրավվածության աճի հաշվին: Ինչ խոսք, պետք է վերանայվեն ծախսերը, ֆինանսական կայունությունը միայն եկամուտների հաշվին չի ձևավորվում, այլ նաև՝ ծախսերի: Այս առումով պետք է օպտիմալացվի համալսարանի կառուցվածքը, վերանայվի որոշ ֆակուլտետների գոյությունը, գուցե և՛ զման խորացման, ինչպես նաև դասախոսների առանձին հաստիքների մասով դրվեն որոշակի չափանիշներ:

Ի՞նչ է հաջողվել իրականացնել այս կարճ ժամանակամիջոցում: Մ. Մինասյանը տեղեկացրեց, որ արդեն կատարվել են որոշ աշխատանքներ: Առաջին հերթին ուշադրություն է դարձվել աշխատանքային և կատարողական կարգապահությանը, որոշակի չափանիշներ են դրվել ուսանողների վարքագծի առումով: Պատկերը անմխիթար էր ուսանողների հաճախելիության առումով, հատկապես մագիստրատուրայում: Ձեռնամուխ են եղել համալսարանում գործող ներքին կանոնակարգերի՝ գործող օրենսդրությանը համապատասխանեցմանը: Ուսանողների գիտելիքների գնահատման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ բավականին քայլեր են կատարվել: Որքան էլ կողմնակից են համակարգիչների միջոցով այդ գործընթացի կազմակերպմանը, որը նախկինում արվում էր 1-ին և 2-րդ կուրսեցիների համար, ռեկտորը կարծում է, որ այս ձևն իրեն չի արդարացնում լիարժեքորեն: Կատարվել է համապատասխան վերլուծություն: «Մենք պատրաստ չենք նորմալ թեստեր կազմելու: Ընթացիկ քննությունների արդյունքները ցույց են տվել, որ առանձին դասախոսների մոտ ուսանողների 90%-ը ստանում է առավելագույն գնահատական: Սա, իհարկե, չի նշանակում, թե նրանց 90%-ը գերազանց է: Կան և հակառակ դեպքեր՝ շատ ցածր միավորներ: Այս մեթոդով միջոց և շատ կալ ուսանողների տարբերակումը չի ստացվում: Փորձը ցույց է տալիս, որ բավական տեխնիկական խնդիրներ կան: Լավ ուսանողը, ով պայքարում է բարձր գնահատականի համար, պետք է գնա եզրափակի փուլ, որը լինելու է բանավոր, պատասխաններով՝ գրավոր ձևակերպված»,- ասաց Մ. Մինասյանը: Նա համաձայն է, որ դա մեծ ռիսկերի հետ է կապված՝ դասախոսի սուբյեկտիվ վերաբերմունքի առումով, բայց գիտելիքների խորացման աստիճանն ահագին տուժում է: Ուսանողները սերտողական աշխատանք են կատարում: Դասախոսական կազմի կողմից պետք է ուսանողների մոտ ավելի շատ զարգացնել ոչ թե ճանաչողական, այլ հիմնականում քննադատական-վերլուծական միտքը, խնդիրներ առաջադրելու և դրանց հասնելու ճիշտ ուղիների ընտրության հնարավորությունները: Ռեկտորի տեղեկացմամբ՝ ձեռնարկվել են ուսումնական ծրագրերի արդիականացման աշխատանքներ: Դրանք դեռևս մշակման փուլում են և ամբողջ փաթեթով պատրաստ կլինեն մոտ ուսումնականին: «Մեր ուսումնական ծրագրերը հետ չափի են մնալ 37 առաջատար բուհերի ծրագրերից, պետք է կարողանանք քայլել համընթաց»,- նման և շատ այլ հավակնոտ, բայց և հետևողական լինելու դեպքում՝ իրատեսական ծրագրեր ունի Արցախի մայր բուհը:

Սվետլանա ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԴՊՐՈՑ

ԸՆԴՈՐԻՆԱԿԱՆ ԴԱՍԴԵԿԻ ԺԱՍ

Ընդօրինակման բաց դասերի հաճախ ենք ակնատես լինում: Հեռականը մայրաքաղաքի և... Արտվածքի անվան հ. 1 հիմնական դպրոցի 6-րդ «բ» դասարանում էր (դասուցի՝ Ալինա Բաղդասարյան) «Իմ հետաքրքրությունների աշխարհը» թեմայով:

Դասուցիի ժամի նպատակն է բացահայտել աշակերտների աշխարհը, ընդլայնել նրանց մտածողությունը, մղել տարբեր խմբակներում ընդգրկված ծնողներին, միմյանց լսելու ունակություն դաստիարակել, նպաստել կոլեկտիվի սերտացմանը: Դասարանի կահավորումը թույլ էր տալիս այն նմանեցնել թանգարանի: «Իմ հետաքրքրությունների աշխարհը», «Ճանաչե՛ք աշխարհն ու իրար», «Ուրախանա՛նք միմյանց հետաքրքրություններով», «Հետաքրքրությունները զբաղմունք են հոգու համար» խորագրերով պատահաներ, լուսանկարների կողմ, աշակերտների աշխատանքների ցուցադրություն, պատի թերթ («Մենք ենք»), տարբեր ասպարեզներում երեխաների ձեռքբերումները հավաստող պատկերներ:



Ընկալիչները ներկայացրին իրենց նկարները, ապա «Հետաքրքրությունների ծառի» «Կերպարվեստի ծյուղին» կայքին իրենց տերևները:

Պարզվեց, որ տղաներն էլ են սիրում պատրաստել թվածքներ, աղցաններ: Հետաքրքիր էր Արմենի շեփոհի, Վարդանի դիտլի նվազը, դասական պարն ու խմբային երգը: Ներկաներիս շատ դուր եկավ երեխաների հազուկապը (միատեսակ համազգեստով էին). համոզվեցինք, որ սա մեկ դասաժամի արդյունքն է: Երևաց, որ դասուցիական ժամերը միշտ հազեցած են նորություններով: Արդեն կարելի է ենթադրել, թե ինչպես են անցկացնում երեխաները ազատ ժամանակը դպրոցում և դպրոցից դուրս:

Երանցից շատերը մասնակցում են ներդպրոցական խմբակներին, մի մասը՝ արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին, ինչպես, որ մի խումբ էլ հաճախում է Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, երաժշտական և արվեստի դպրոցներ, սպորտային խմբակներ:

Թամարան իր հետաքրքրությունները բավարարելու համար շատ է ընթերցում, երբեմն էլ՝ ստեղծագործում: Նրան շատ է օգնում աշխատանքը Արցախի հանրային հեռուստատեսության մանկական «Կարկաչ» հաղորդաշարում: Ամեն մի հաղորդում պատրաստելիս նոր բացահայտումներ է անում: Տիրապետող հետաքրքրությունը մեղվաբուծությունն է: Նա պապիկի աշակերտն է: «Պապս մեղվաբուծ է, ինձ սովորեցրել է լավ ճանաչել ու սիրել մեղուներին: Երբ գյուղում են լինում, ես էլ եմ հազում մեղվաբուծի հագուստ ու միանում պապիկիս: Այդ փոքրիկ ժրջան էակներն անչափ հետաքրքիր են: Նրանց աշխատանքը շատ կազմակերպված է, աշխատում են խմբերի բաժանված. մի խումբը նեկտար է հավաքում, մյուսը՝ մշակում, ու այս ամբողջ աշխատանքը ղեկավարում է մայր մեղու»,- ասում է նա:

Եվ այսպես, դասին մասնակցեցին բոլոր աշակերտները: Արդյունքում մատուցվեց դասավանդման նոր մեթոդներով կառուցված ուսուցողական և դաստիարակչական դաս, որից թե՛ աշակերտները, թե՛ ներկաները մեծ բավականություն ստացան: Դպրոցի տնօրենը շնորհակալություն հայտնեց ուսուցչուհուն՝ արդյունավետ դասեր վարելու համար:

Բոլոր դպրոցներից ներկայացած դասուցիները խոսեցին բաց դասի արժանիքների մասին՝ այն համարելով նպատակային և ուսանելի:

Վերջում հավելեց, որ դասուցիի բաց դասը երաշխավորվել է մանկապատանեկան աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Լենա Ղազարյանի կողմից:

Անահիտ ՄԵՍՐՈՊՅԱՆ Սրբեկ. ՄՊՍԿ մեթոդիստ

«ՄԻՏԻՔԱՐ ՍԵՐԱՍԱՑԻ» ԿՐԹԱՆԱՄԱԼԻԻ ԱՌՈՐՅԱՅԻՑ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐԱՊՄՈՒՆԵՆԵՐ

Ինչպես տեղեկացրել ենք թերթի նախորդ համարում, Ստեփանակերտի մի խումբ մանկավարժներ հոկտեմբեր ամսին եղան Երևանի «Միտիքար Սեբաստացի» կրթահամալիրում, ծանոթացան պետական այլընտրանքային (հեղինակային) կրթական ծրագրեր իրականացնող այս մեթոդ-դպրոցի փորձին: «Լուսարարը» պարբերաբար դրվագներ կբերի նրա գործունեությունից:

Կրթահամալիրն ընդգրկում է ութ դպրոցներ՝ նախակրթարանից մինչև արհեստագործական դպրոց և գեղարվեստի քոլեջ: Դրանք խորհրդային ժամանակների տիպային կան ոչ տիպային մանկապարտեզի և դպրոցի շենքեր են՝ մասնակի ձևափոխված:



Բոլոր հաստատություններում նախքան հիմնական դասերը սկսվելն անցկացնում են ընդհանուր պարապմունքներ: Նախ ասենք, որ այստեղ «դաս» բառը չեն գործածում, այլ՝ «պարապմունք»: Կա ընդհանուր պարապմունք, խմբային պարապմունք, պարապմունք-ճամբար, պարապմունք-ճամփորդություն, պարապմունք-թանգարան և այլն: Ընդհանուր պարապմունքները տեղի են ունենում սրահներում: Մեծից փոքր ուսուցիչների, ղեկավարների հետ հավաքվում են այդտեղ: Մենք ներկա եղանք հիմնական դպրոցի ընդհանուր պարապմունքին: Սկզբում կատարվեց Ն. Շնորհալու «Առավոտ լուսու»-ն: Որպեսզի մենք էլ մասնակցեինք, երգը կատարվեց ուսուցման ձևով՝ կարտկեթի միջոցով: Այսպես մենք նրանց հետ կատարեցինք նաև կրթահամալիրի հիմնը՝ ստեղծված Դ. Վարուժանի «Անդաստան» բանաստեղծության խոսքերով և Մ. Խորենացու շարականի երաժշտության հիման վրա: Երգերը մենք հեշտուրբայն սովորեցինք: Պարապմունքը վարում էր կրթահամալիրի երգչախմբի ղեկավար Մարինե Սկրտչյանը: Նա ասաց, որ այդ կերպ ընդհանուր պարապմունքներին նոր երգեր են սովորում: Մեզ ներկայացրին նաև ուսուցանելու ձևերը, թե ինչ սկզբունքով և առանց ժամանակ կորցնելու կարելի է դա անել: Մեր խմբից ուսուցչուհի Կարինե Չիլինգարյանը երգեց «Ղարաբաղի հորովելը», իսկ աշակերտ Անդրանիկ Վերդյանը՝ «Ձարթիր, լառ»-ն: Կատարումները նկարահանվեցին կրթահամալիրի աշակերտներից մեկի կողմից: Եվ երբ հաջորդ օրը ներկա եղանք մայր դպրոցի ընդհանուր պարապմունքին, տեսանք, թե ինչպես կարտկեթի միջոցով դպրոցը կատարեց այս երգերը: Ընդհանուր պարապմունքներին կատարվում են նաև անգլերեն կամ ռուսերեն երգեր, ազգային և այլ պարեր: Դրանում մեծ դեր է խաղում պրոյեկտորը: Ի դեպ, պրոյեկտորներ կան բոլոր դասարաններում, անգամ մանկապարտեզի խմբասենյակներում: Դրանք ուսուցման կարևոր գործիք են:

Ընդհանուր պարապմունքները սովորաբար հերթով վարում են աշակերտները: Այսպիսով, բոլորը՝ սովորողները, դպրոցի ղեկավարները, ուսուցիչները, օժանդակ աշխատողները կարողանում են միասին երգել և պարել: Ընդհանուր պարապմունքներին հնչում են նաև հայատարություններ, շնորհավորանք ծննդյան օրվա կապակցությամբ, շնորհակալանքի խոսք, ինչու չէ, նաև՝ նկատողություն որևէ մեկին, ով թերացել է իր պարտականություններում: Ինչպես ընդհանուր պարապմունքները, այնպես էլ դպրոցում անցկացվող բոլոր միջոցառումները, անցուդարձն արտացոլվում են կրթահամալիրի MSKH կայքէջում: Բոլորը կայքէջից տեղեկանում են նաև հաջորդ օրվա պարապմունքների թեմայի մասին:

Ընդհանուր պարապմունքները տևում են 15 րոպե: Իսկ տոնական օրերին դրանք կարող են լինել կես ժամ, քանզի տոնը իր հետ լրացուցիչ բովանդակություն է բերում: Այսպես մեծից փոքր լիցքավորված, զվարթ տրամադրությամբ նրանք անցնում են իրենց գործին:

(Շարունակելի)

ՄԵՄԻՆԱՐ-ԽՈՐՀՐԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԱՌԱՎԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նշվեց, որ տնային ուսուցումը շատ դեպքերում ներդրում է երեխային: Տանը մնալով, երեխայի ներաշխարհում, սոցիալ-կենցաղային և մի շարք այլ հանգամանքներով պայմանավորված, կարող են առաջանալ հուզական բազմապիսի խնդիրներ: Հետևաբար, որքան հնարավոր է, ինչքանով ի վիճակի է երեխան գալ դպրոց, պետք է թույլատրել:

Բերդաշենի դպրոցի տնօրեն Արտակ Ջարադարյանը հայտնեց, որ իրենց դպրոցը հատուկ մանկավարժի կարիք ունի. մեկ դասաժամում հնարավոր չէ պարապել և՛ նորմալ, և՛ կրթական առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների հետ: Տնօրենն առաջարկեց յուրաքանչյուր դպրոցի տալ մեկական հոգեբանի հաստիք: Ի պատասխան հայտնվեց, որ այսօր ԳԹԿ-ի խնդիրը համապատասխան մասնագետների բացակայությունն է: Անհրաժեշտ է, որ տվյալ դպրոցը հնարավորինս իր ներուժը կիրառի խնդրի լուծման գործում:

Կաղարծու դպրոցի տնօրեն Լյուդա Հայրապետյանի կարծիքով՝ մանկավարժ ինքնին հոգեբան է և պետք է կարողանա ճիշտ գնահատել յուրաքանչյուր աշակերտի հնարավորությունները: Տնօրենը խնդրեց ԳԹԿ ներկայացուցիչներին՝ հաճախակի ներկայանալ դպրոցներ:

Վազգենաշենի դպրոցի տնօրեն Վազիֆ Սեծլումյանն ասաց, որ դպրոցում ունեն այդ կարգի երեխաներ, ովքեր տառերն անգամ չեն ճանաչում: Պատասխանը եղավ այն, որ երեխայի մոտ ընկճվածություն նկատելու դեպքում տնօրենը պետք է դիմի շրջանի սոցմանկավարժին, որից հետո միայն տվյալ երեխայի փաստաթղթերը կարող են ձևակերպել և ուղարկել ԳԹԿ:

Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Ջ.

Ղուլյանը խոսեց մանկավարժի պարտականությունների մասին: Ասաց, որ շրջանի մի շարք դպրոցներում քիչ թվով աշակերտներ են սովորում, և ուսուցիչը չգիտի ինչպես անցկացնել 45 րոպե սահմանված դասաժամը: Նման պարագայում դասաժամն իզուր վատնելու փոխարեն նրանք կարող են ուշադրության կենտրոնում պահել կարիքավոր աշակերտներին: Վերջում Ջ. Ղուլյանը մի շարք հայտարարություններ արեց և կարևորեց համատեղ, աշակերտ ու հետևողական աշխատանքը:

Ամփոփելով սեմինար-խորհրդակցությունը՝ Յու. Քարամյանն ասաց, որ ներառական կրթություն իրականացնելիս յուրաքանչյուր դպրոցի նշանաբանը պետք է լինի՝ «Ներառական կրթության իրականացումը ոչ թե բարեգործություն է, այլ կրթության իրավունքի ապահովման հնարավորություն»: Ներառական կրթությունն իրականացվում է «Կրթության մասին» ԼՂՀ օրենքի, «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենքի և «Հանրակրթության պետական կրթակարգի» հիման վրա: Աշխատանքները պլանավորվում, համակարգվում և վերահսկվում են ուսումնական հաստատության տնօրենի կողմից: Տնօրենը, կախված երեխաների կրթական կարիքներից, կատարում է մանկավարժական կարիքի ընդունելություն և տեղաբաշխում: Որոշում է աշխատողների պաշտոնային պարտականությունները, ստեղծում պայմաններ նրանց մասնագիտական վարկետության, որակավորման բարձրացման նպատակով: Ներառական կրթության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է գործընկերային հարաբերություններ ստեղծել աշակերտների ծնողների,

մանկավարժների, ներառական կրթությանը սատարող կառույցների ու անհատների, այդ թվում՝ հանրակրթական դպրոցների սովորողների և ուսուցիչների միջև: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման համար կարևոր, բաղկացուցիչ մաս է բազմամասնագիտական փոփոխ կազմումը, որում ներգրավված են երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետներ: Թիմի կարևոր անդամ է համարվում երեխայի ծնողը: Թիմը մշակում է երեխայի ուսուցման անհատական պլան՝ ուղղված կարիքի բավարարմանը: Այսպիսով՝ այն հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունը կազմակերպել հասակակիցների հետ համատեղ, հանրակրթական դասարանում՝ անհատական պլանով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ծրագրով: Պարբերաբար տեղի են ունենում հանդիպումներ, որտեղ քննարկվում են սովորողի առաջընթացը և դժվարություններն ուսումնական գործընթացում: Քննարկման կամ գրույցի անցկացման պատասխանատվությունը կրում է հատուկ մանկավարժը կամ դասուցիչը: Հիշեցրեց, որ արդյունավետ աշխատանքային թիմերն ունեն ընդհանուր միասնական նպատակներ, արդյունավետ հաղորդակցություն, աշխատանքի և պարտականությունների բաժանում, համագործակցությամբ խնդիրների լուծման կարողություն:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ ք. Մարտունի



ՎԱՍՏԱԿ

ԿՅԱՆՔԻ ՏԱՐԻՆԵՐԻ ԱՄՏՈՒՄՆԵՐ



իր սանձերի մեջ: Բայց ինչ արած, կյանքն իր աստվածադիր օրենքներն ունի: Մնում է հաշտվեն այդ օրենքների հետ, ու երբ գալիս է պահը, շարադրես անցյալ տարիների հուշանատյալը: Այդպես էլ վարվում են...

Օճվել են 1928թ. փետրվարի 10-ին, Դրմբոն գյուղում, ծառայողի ընտանիքում: 1944 թվականին գերազանց գնահատականներով ավարտել են Մարտակերտի միջնակարգ դպրոցը: Եղբայր էր միայն միսիրը: Եղբոր հետ մասնակցում էին բոլոր միջոցառումներին՝ 5-րդ դասարանից մինչև 10-րդը: Պատվաբեր էր, և ինձ հարգում ու խուն էին մեր դասարանցիները՝ 10 արջիկ և 10 տղա: Ուսման առաջադիմության համար մրցում էինք միմյանց հետ, և հետաքրքիրն այն էր, որ օգնում էինք իրար, այն իմաստով, որ մեր դասարանի անունը միշտ հնչեցվի առաջին տղուում: Այդպես էլ ստացվում էր: Միտվ մասնակցում էինք երգի, պարի խմբակներին, հրաձգարանի պարավունքներին: Շատ էի սիրում այդ գործը: Դրա շնորհիվ էր, որ այդ տարիներին դարձա շրջանային, մարզային և հանրապետական մրցույթների առաջին տեղը գրաված կին հրաձիգը: Դպրոցը 1944-ին ավարտելուց հետո մեկ տարի աշխատել են Մարտակերտի շրջապետում՝ որպես ընդհանուր բաժնի վարիչ: 1945թ. ընդունվել են Ադրբեջանի Վ.Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը և 1949-ին ավարտել առաջին կարգի դիպլոմով: Այդպես սկսվեց իմ երազային տարիների նոր շրջանը՝ իմ փայփայած մանկավարժական գործունեության մարաթոնը: 1949-ի սեպտեմբերի 1-ին մատյանը ձեռքս առա ու մտա իմ հարգատ օգուղի յոթնամյա դպրոցի 7-րդ դասարան ու մեկ տարի դասավանդեցի մաթեմատիկա և ֆիզիկա: Զեռայալ երկու տարիներին աշխատեցի Զլորան գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես ուսուցչուհի և ուսմասվար:

Մարզի դպրոցները խիստ կարիք ունեին բարձրագույն կրթությանը մասնագետների, առանձնապես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչների: Դրանից ելնելով, ինձ հաճախակի տեղափոխում էին տարբեր դպրոցներ: Ահա թե ինչու Զլորանից անմիջապես հետո աշխատեցի Զարուբյուրագուժերի միջնակարգում՝ որպես ուսուցչուհի, ուսմասվար, իսկ 1953-1955 թվականներին իմ գիտելիքներն ու փորձն ընծայեցի Կուսապատի միջնակարգ դպրոցին՝ որպես ուսուցչուհի և ուսմասվար: Մական իմ խնդրանքով շրջո՞ղկոթբաժնից թույլատրեցին, որ շարունակեմ վարել նաև 9-րդի դասընկերուհին: Դա կապված էր իմ երեք գերագույնից աշակերտների հետ: Ես նրանց հետ աշխատում էի ամբողջ հոգով ու սրտով, կազմակերպում էի արտաժամյա պարավունքներ: Արդյունքում Յուրի Գեղարձունյանն ու Օֆելյա Գալստյանը 10-րդն ավարտեցին ոսկե, իսկ Զարուհ Լոյսյանը՝ արծաթե մեդալներով: Բայց ահա կրկին շրջանի ժողովրդական կրթության բաժնից ինձ առաջարկեցին աշխատանքս շարունակել Զայլու գյուղի միջնակարգ դպրոցում, ուր դասավանդում էր եղբայրս՝ Ռոման: Երան գորակալից էին սովետական բանակ, իսկ ես փոխարինեցի նրան: Երկու տարի այստեղ աշխատելուց հետո կյանքն ինձ տարավ Մարտունու շրջանի ճարտար գյուղ: 1957-1961 թվականներին, որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցչուհի, մասնագիտական կարողություններս ցուցաբերեցի այդ խոշոր գյուղի աշակերտությանը՝ արժանանալով և նրանց, և ծնողների ջերմ հարգանքին: 1961-ին տեղափոխվեցի Ստեփանակերտ, աշխատեցի բաղաբի հերթափոխային դպրոցում՝ որպես ուսուցչի և ուսմասվար: Վերադառնալով աշխատանքային իմ տարիները՝ գոհունակության զգացում են ապրում այն բանի համար, որ չեմ բավարարվել միայն լիսակազմումս: Ձգտել են ակտիվ դիմել դպրոցական կոլեկտիվին հուզող և անհրաժեշտ բոլոր միջոցառումներում: Թող անհամեստությամբ

չթվա, եթե ճշմ, որ չի եղել Արցախում կազմակերպված ուսուցչական մի կոնֆերանս, որտեղ չընդգծեին իմ անունը որպես առաջավոր մանկավարժ: 1980-ին արժանացել եմ «Սոցիալ-գոթյան հաղթող» կոչանքին: Կենսաթոշակի եմ անցել «Աշխատանքի վերականգնման» մեդալով, պարգևատրվել եմ նաև պատվոգրերով: Ես ինձ համարում եմ երջանիկ մայր ու տատիկ: Տղաս՝ Սլավա Մարտունյանը (այժմ՝ թոշակառու), երկար տարիներ աշխատել է Արցախի ոստիկանության համակարգում՝ որպես գեղանկարիչ, իսկ աղջիկս՝ Սիլվան, մի քանի տարի դասավանդել է Ս. Պետրոբուրգի հայկական կիրակնօրյա դպրոցում՝ լինելով նրա տնօրենը: Բարձրագույն կրթությամբ թոշակների և ծոռների տեր եմ: Իմ երջանկության աղբյուրը, հասկանալի է, մեր ազատ ու անկախ Արցախն է՝ Լեռնային Ղարաբաղի Զանրապետությունը, մեր ժառանգորդների անփոխարինելի սրբազան օջախը: Մենք՝ հայերս, այնպիսի ժողովուրդ ենք, որ տեսել ենք դաժան արհավիրքներ, բայց երբեք չենք ընկճվել: Այսօր էլ պետք է հավատարիմ մնանք դժվարությունները հաղթահարելու մեր ավանդական կամքի ուժին, համախմբվենք մեր վերածնված պետականության շուրջ և պաշտպանենք մեր հայրենի հողը: Ես հպարտ եմ նաև, որ իմ թոռը՝ Արմենը, ավարտելով ԱրՊՊ Երկրաբանական ֆակուլտետը, երկու տարի ծառայել է ԼՂԶ պաշտպանության բանակում և այսօր էլ ծառայում է մեր բանակում՝ կապիտանի աստիճանով: Թողնուհիս՝ Արմինեն, որպես բարձրագույն կրթությամբ ատամնաբույժ՝ աշխատում է մեր անփոխարինելի Ստեփանակերտում: Խորհուրդ կտայի մեր երիտասարդներին՝ աչքը չսպառնալ դեպի դուրս, ապրել մեր աստվածավեր Արցախում, շենացնել այն՝ համոզված, որ մարդու երջանկությունը կապված է սեփական հայրական օջախի հետ: Ցանկանում եմ խոսել իմ անհանգիստ բնավորության հետ կապված մի շատ հետաքրքիր երևույթի մա-

սին: Իմ ավագ եղբայրը՝ Ռուբենը, 1941թ. կամավոր մեկնել է ռազմաճակատ: Որոշ ժամանակ անցնելուց հետո նրանից ոչ մի մանակ կամ լուր չենք ստացել: Նրա վերջին նամակն ստացել էինք Տուսապետի շրջանի Շահումյան գյուղից: Եղբորս ճակատագրին հաստ լինելու նպատակով սկսել եմ որոնողական իմ աշխատանքները: Եղբայրս 672-րդ հայկական զորքի հրամանատարներից էր: Նամակներով կապ էի պահում Շահումյանի թանգարանի տնօրեն Յասաբեկ Նալբանդյանի հետ: 1986-ին եղա այն վայրում, որտեղ իր մարտական ընկերների հետ գերմանական ֆաշիստների դեմ մարտնչել է եղբայրս: Աական անարդյունք էին որոնումներս: Միայն ծնակահողից Բագրատ Առաքելյանը մի օր մեր հանդիպման ժամանակ պատմեց, թե ինչպես 1942-ին Ռուբենը զոհվել է Նախագրուկի քաղաքի ազատագրման համար մղված մարտերում, որին մասնակցել է նաև ինքը: Իմ որոնողական աշխատանքի ընթացքում հարյուրավոր նամակներ եմ ուղարկել Սովետական Միության համապատասխան կազմակերպություններին: Եղբորս վերաբերյալ տեղեկություններ ստանալու արդյունքում իմացել եմ նախատակ 11 խիզախ արցախցիների, այդ թվում նաև՝ դպրոցական տարիների իմ դասընկեր Սերգեյ Սարգսյանի մասին: Վարար գետի պես անցնում է կյանքս՝ ծանրաբեռնված մանկավարժությամբ ստացած իմ տպավորություններով և ապրումներով: Խոստովանեմ, սակայն, որ իմ իմաստալից կյանքի ամենարդյունավետ և ամենառաճախեղ ժամանակաշրջանը համարում եմ այն 40 տարիները, որոնք ընդհանրության մեջ կազմում են ուսուցչական ցվիկումիս լուսաշող ու ստղաբյուր՝ բխած իմ հոգուց ու արտից, ի վառս մեր նոր սերնդի դաստիարակության, մեր ժողովրդի կրթական առաջընթացի:

Մարզո ԱՅԱՐՈՆՅԱՆ  
Ստեփանակերտ քաղաքի 20-րդ դարի լավագույն մանկավարժ, թոշակառու

Շնորհավորանք ԵՐԳԸ՝ ՄՇՏԱԿԱՆ ՈՒՂԵԿԻՑ



Երջանիկ է այն մարդը, որի հոգին է երգում, իսկ առավել երջանիկ է նա, ով կարողանում է ստիպել երգել հազարավոր հոգիների: Սվետլանա Գրիգորյանը ահա արդեն 20 տարի է, մեր փոքրիկներին կրթում է հոգեպարար երաժշտության ջերմագուրդով և կերպարով: Նրա սաները մտածում են երգելով, երգը դարձել է նրանց մշտական ուղեկիցը, օրն առանց երգի նրանք չեն պատկերացնում: Տեսնելով իրենց սիրելի ուսուցչուհուն բարի դեմքը՝ նրանք արդեն իսկ սկսում են երգել: Սիրելի ուսուցչուհին երեխաների հոգում միախլուսվում է երգի ու երաժշտության հեքիաթային հնչյուններին: Նրանք մեծ բավականությամբ են հաճախում երգի դասերին: Սվետլանա Գրիգորյանը ծնվել է 1953թ. նոյեմբերի 27-ին, Ստեփանակերտ քաղաքում: 1976-ին ավարտել է Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանը: 1983թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և մեթոդիկա» բաժինը: 1974-ից մինչև 1992 թվականը աշխատել է որպես երաժշտության ուսուցչուհի: 1994-ից աշխատում է հ. 7 հիմնական դպրոցում: Քանի՜ քանի միջոցառում է նա գեղեցկացրել երաժշտության միայն իրեն հայտնի հրաշքներով: Ընկերասեր է, բարի ու պատրաստակամ: Նրան սիրում են կոլեկտիվում: 3. 7 հիմնական դպրոցի կոլեկտիվը շնորհավորում է սիրելի ուսուցչուհուն ծննդյան 60-ամյակը, մաղթում նրան առողջություն, հաջողություն և երջանկություն:

Ստեփանակերտի Ե. Զարեհի անվան հ. 7 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

«ԱՆՆԱՆ ԱՅԳԻ» ԴՊՐՈՅՈՒՄ

Տարվա այս եղանակին մանկապարտեզներում, դպրոցներում, ինչու է՝ նաև ավելի բարձր ուսումնական հաստատություններում կազմակերպվում են աշնանը նվիրված ցերեկույթ-երեկույթներ:



Ստեփանակերտի Մ. Մաշտոցի անվան հիմնական դպրոցը աշնան այգի էր հրավիրել բազմաթիվ հյուրերին: Բացվում են այգու դռները, և երևում է մի հրաշալի տեսարան՝ ոսկեգոծ, գույնզգույն տերևներով խշխշան այգին, որտեղ վերջին վրձնահարվածներն է տալիս նկարիչը՝ կտավին ամբողջացնելով այգու պատկերը իր «բանկիչներով»: Քիչ անց հայտնվում են իրենք՝ «այգեցիները»՝ մրգերն ու բանջարեղենը: Մինչ նրանք ուրախ երգով, ժպտերես ողջունում են հյուրերին, ներկաները հայացքով որոշում են այգու բերքառատությունը... Ահա Նուռը՝ թագակիր, հյուրեր Տանձը, կասկարմիր Պոմիդորը, հաղողը՝ խոշոր ողկույզով, բուրուճակա՞ն Մերկիկը, Խնձորը, Թուզը, Չմերուկը, Սեխը, Վարունգը, Սալորը, Սոխը, Կեռասը, Կաղամբը... Բոլորն էլ առողջ, հյութեղ, համով: Ուղղակի զգում են նրանց համն ու հոտը: Եվ հասկանում են, թե բարի սերմնացանը տարվա ընթացքում ինչքան շատ աշխատանք է կատարել, որպեսզի այդպիսի պտուղներ ստանա: Չենք սերմնացան են անվանում ուսուցչին, որն անխոց մշակի պես ամբողջ տարին և տարիներ շարունակ քրտնաջան աշխատանք է թափում, որպեսզի պիտանի պտուղներ տա հասարակությանը: Եվ ահա մրգահամոցն-աշնան համոցն այդ աշխատանքի քաղցր պտուղները տեսան և ըմբռնեցին ներկաները:

Դպրոցի տնօրեն Առնեսա Մինասյանը, սիրով հյուրընկալելով բոլորին դպրոցի աշնան այգում, բնութային և մարդու ներդաշնակ գործունեությունը շեշտեց, որի շնորհիվ է մայր բնությունը առատ վարձահատույց լինում: Չայ ժողովուրդը բնութայինը նվիրված բազմաթիվ տոնակատարությունների ունի, բայց բնապաշտությունը միայն տոներ կազմակերպելով է, որ երևում է, այլ բնությունը պահպանելով, սիրելով, հոգ տանելով նրա մասին, խելացի օգտագործելով, և դա փոխադարձվում է: Տնօրենը շնորհավորեց օրվա հերոսներին՝ չորրորդ դասարանցիներին՝ քաղցր ու համեղ բալիկներին, բարի սերմնացաններին՝ դասվար Կարինե Գևորգյանին, երաժշտական ղեկավար Անահիտ Գաբրելյանին, անխոց մշակներ ծնողներին՝ նման գեղեցիկ տոն պարգևելու համար: Կրթության բաժնի վարիչ Կառլեն Մա-

Սեփ. Լրատվություն

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՅԻՆ

ՈՉ ՍՏԱՆՊԱՐՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԴՊՐՈՅԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԵՆՔԱՅԻՆ

Դպրոցական մաթեմատիկայի բովանդակության բարեփոխմամբ զբաղվող մասնագետների ուշադրությունը գրավում են որոշակի ժանրի խնդիրներ, որոնք գրականության մեջ կոչվում են հոմանիշ բառերով՝ պրոբլեմային, ստեղծագործական, էվրիստիկ և այլն, այսինքն խնդիրներ, որոնք լուծման եղանակը հայտնի չէ տվյալ սուբյեկտին: Այդպիսի խնդիրները կոչվում են ոչ ստանդարտ:

Դպրոցականների ուսումնական գործունեության էֆեկտիվ կազմակերպումը ոչ ստանդարտ խնդիրների լուծման գործընթացում հանդիսանում է սովորողների մաթեմատիկական մշակույթի ձևավորման կարևորագույն միջոց, ձևավորելու համար մաթեմատիկական մտածողության այնպիսի որակներ, ինչպիսիք են ձկունությունը, ռացիոնալությունը, հիմնավորվածությունը և այլն:

Այս որակների օրգանական միասնությունը բացահայտվում է մարդու ընդունակությունների մեջ, նրան հնարավորություն տալով հաջողությամբ զբաղվելու ստեղծագործական գործունեությամբ: Ոչ ստանդարտ խնդիրների լուծման համար սովորողները պետք է ներդնեն որոշակի ուժ, ցուցադրեն կամք, համառություն և նպատակասլացություն: Խնդիր լուծման հնարքների ոչ սովորական լինելը ստեղծում է ինքնուրույն հետազոտությամբ զբաղվելու ճաշակ, հնարամտության բացահայտում, ստեղծում է դրական զգացմունքներ ինչպես խնդրի լուծման ընթացքում, այնպես էլ արդյունքի ստացման պահերին:

Ոչ ստանդարտ խնդիրների նշանակությունը որոշվում է նրանով, որ նրանք ապահովում են՝

1) ծրագրային գիտելիքների յուրացում ավելի բարձր մակարդակով, որովհետև դրանք լուծումը պահանջում է աշակերտի բոլոր գիտելիքների ինտեգրում, ուսուցում է յուրահատուկ, ոչ տարածված եղանակներով գործողություններ:

2) սովորողների մաթեմատիկական և ընդհանուր իմաստելետու ալ ընդունակությունների բացահայտման հնարավորություն, ուսուցվածության մակարդակի որոշում, մաթեմատիկական մտածողության զարգացում, ճանաչողական հետաքրքրությունների ձևավորում:

3) ընդունակությունների ստուգում և ինքնուրույն սովորելու հնարավորություն:

Ոչ ստանդարտ խնդիրները ավանդաբար օգտագործում են արտադասարանական տարբեր աշխատանքներում, շրջանավարտների ավարտական քննություններում, դպրոցական մաթեմատիկական օլիմպիադաներում և այլն:

Խնդիր 1. Ապացուցել, որ գոյություն չունի բազմանիստ, որի նիստերից 2013-ը եռանկյուններ են, իսկ մնացած նիստերը՝ քառանկյուններ և վեցանկյուններ:

Լուծում: Ենթադրենք գոյություն ունի և այն ունի m եռանկյուն, n քառանկյուն և p վեցանկյուն նիստեր: Հաշվենք բազմանիստի կողերի թիվը՝ k:

k = (3m + 4n + 6p) / 2 = 3/2 m + (2n + 3p); k-ն ամբողջ թիվ է (ինչու՞՝ բաժանեցինք երկուսի), իսկ հավասարության աջ մասը կտորակալյին, որովհետև k, n, m, p ∈ N: Ստացանք հակասություն, որը և հաստատում է խնդրի պահանջը:

Խնդիր 2. Ապացուցել, որ 111...1 թիվը (27 հատ մեկ), բաժանվում է 27-ի:

Լուծում: Կատարենք նշանակում՝ a = 111...1 = 111 · 10<sup>24</sup> + 111 · 10<sup>21</sup> + 111 · 10<sup>18</sup> + ... + 111 · 10<sup>3</sup> + 111 = 111 · (1 + 10<sup>3</sup> + 10<sup>6</sup> + ... + 10<sup>24</sup>) = 111 · b

Առաջին արտադրիչը՝ բաժանվում է 3-ի, իսկ b-ն՝ 9-ի, որովհետև նրա զրառումը պարունակում է 9 մեկեր, իսկ մնացած թվանշանները զրոներ են: a-ն բաժանվում է 27-ի:

Խնդիր 3. Ապացուցել, որ բնական թվի բաժանվելը 2<sup>k</sup>-ի (k < N), համարժեք է նրա վերջին k թվանշաններից կազմված թիվը 2<sup>k</sup>-ի բաժանվելուն:

Լուծում: Բնական թիվը գրառենք հետևյալ տեսքով՝ c = a<sub>1</sub>a<sub>2</sub>...a<sub>n</sub>b<sub>1</sub>b<sub>2</sub>...b<sub>k</sub> = a<sub>1</sub>a<sub>2</sub>...a<sub>n</sub> · 10<sup>k</sup> + b<sub>1</sub>b<sub>2</sub>...b<sub>k</sub> (n < N); 10<sup>k</sup>-ն բաժանվում է 2<sup>k</sup>-ի, հետևաբար c թիվը 2<sup>k</sup>-ի բաժանելիության հարցը կապված է b<sub>1</sub>b<sub>2</sub>...b<sub>k</sub> թվի բաժանելիությունից:

Այս խնդիրը հանդիսանում է դպրոցական ծրագրում զետեղված բնական թիվը 4-ի, 8-ի բաժանելիության հայտանիշի ընդհանրացումը:

Խնդիր 4. Գտեք ամենափոքր բնական թիվը, որը գրառվում է նույն թանշաններով և բաժանվում է 18-ի:

Լուծում: Որոնելի թիվը գրառենք հետևյալ տեսքով  $\overline{aaa\dots a}$ : Քանի որ այն բաժանվում է 18-ի ապա որոնելի թիվը գույգ է: Կիրառելով 9-ի բաժանելիության հայտանիշը կգրենք (a + a + a + ... + a):9 ⇒ na:9; Քանի որ a-ն գույգ է, ապա na-ն ևս գույգ է:

1) Թող n = 18: Այդ դեպքում a-ի ամենափոքր հնարավոր արժեքը 3 է, այսինքն a = 6:

2) Թող na = {36, 54, 72, ...}, այս դեպքում a = {12, 18, 24, ...}, որը հնարավոր չէ՝ որովհետև 1 ≤ a ≤ 9: Պատասխան՝ 666:

Խնդիր 5. Բաժանվում է արդյոք 22<sup>55</sup> - 55<sup>22</sup> տարբերությունը 7-ի:

Լուծում: 22<sup>55</sup> - 55<sup>22</sup> = (21+1)<sup>55</sup> - (56-1)<sup>22</sup>: Կիրառելով Նյուտոնի երկանդամ փակագծերում պահված թվերի գումարի նկատմամբ կատանանք գումարելիներ, որոնցից յուրաքանչյուրը բազմապատիկ է 7-ին, բացառությամբ վերջին գումարելիների, որոնք գումարը կազմում է 0:


Պատասխան՝ այո:

Խնդիր 6. Ապացուցել, որ եթե (m-1)!+1 բաժանվում է m-ի, ապա m-ը պարզ թիվ է:


Լուծում: Ապացույցը կատարենք հակասող ընդունելիության մեթոդով: Ենթադրենք m-ը բաղադրյալ թիվ է, այդ դեպքում այն ունի պարզ արտադրիչ փոքր m-ից, որը համընկնում է արտադրյալի արտադրիչներից մեկի հետ: Ստացվում է, որ (m-1)!+1-k·m, k ∈ N, հավասարության առաջին գումարելին և գումարը՝ k·m-ը, բաժանվում են մի թվի, իսկ երկրորդ գումարելին՝ 1-ը, ոչ: Ստացանք հակասություն, հետևաբար m-ը պարզ թիվ է:

Խնդիր 7. Հարթության վրա տրված է ուռուցիկ քառանկյուն: Գտնել հարթության այն կետը, որից քառանկյան զագաթների հեռավորությունների գումարը ամենափոքրն է:


Լուծում: Որոնելի կետը քառանկյան անկյունագծերի հատման M կետն է (նկ. 1): Եվ իրոք, եռանկյան անհավասարության համաձայն AM + CM հեռավորությունների գումարը փոքր չէ AC անկյունագծից, իսկ BM + DM հեռավորությունների գումարը՝ BD անկյունագծից: Այդ պատճառով փոքրագույն հեռավորությունների գումարը հավասար է AC + BD: Այսպիսով մենք միացրինք քառանկյան




նկ. 1



նկ. 2



նկ. 3



նկ. 4

զագաթները ամենափոքր գումարային երկարությամբ ճանապարհների համակարգով, որին անվանում են նաև Շտեյնների ցանց տրված կետերի համակարգի համար:

Խնդիր 8. Հարթության վրա տրված են երեք կետեր՝ A, B, C, որոնք չեն պատկանում միևնույն ուղղի: Հարթության ո՞ր T կետի համար AT + BT + CT հեռավորությունների գումարը ամենափոքրն է (նկ. 2):

Լուծում: Կառուցենք AT, BT և CT հատվածները: Պտտենք հարթությունը 60°-ով A կետի շուրջը: Պտույտը C և T կետերը կարտապատկերի համապատասխանորեն D և N կետերի: AND և ATC եռանկյունները հավասար են, հետևաբար TC = ND: Եռանկյուն ANT հավասարակողմ է, որովհետև AT = AN և ∠TAN = 60°, այդ պատճառով TA = TN: Այսպիսով AT + BT + CT գումարը հավասար է BTND բեկյալի երկարությանը, հետևաբար AT + BT + CT > DB: Հավասարությունը տեղի ունի այն դեպքում, երբ B, T, N, D կետերը պատկանում են մի ուղղի, նշված հերթականությամբ: Դա նշանակում է, որ ∠BTA + ∠ATN = 180° և, հետևաբար

∠BTA = 120°, ինչպես նաև ∠AND + ∠ANT = 180°, հետևաբար ∠AND = 120° և ∠ATC = 120°:

Այսպիսով TA, TB, և TC ճառագայթները գույգ առ գույգ կազմում են 120° անկյուն (նկ. 3): T կետը կոչվում է ABC եռանկյան Տորիչելի կետ: Եթե ABC՝ եռանկյան A անկյունը փոքր չէ 120° անկյունուց, ապա Տորիչելի T կետը համընկնում է A կետի հետ:

Խնդիր 9. 4 գյուղեր դասավորված են 4 կմ երկարությամբ կողմով քառակուսու զագաթներում: Բնակիչները որոշել են կառուցել ճանապարհների ցանց այնպես, որ հնարավոր լինի ամեն մի գյուղից մեկնել այլ ցանկացած գյուղ: Այդ նպատակի համար նրանք հավաքեցին 11 կմ երկարությամբ ճանապարհի համար գումար: Բավարար է արդյոք դա ճանապարհը կառուցելու համար:

Լուծում: Հարցին մակերեսորեն մոտենալու դեպքում ստացվում է, որ ոչ: Եթե ճանապարհը կառուցենք միացնելով քառակուսու 3 կողմերը ռուսերեն «П» տառի տեսքով, ապա երկարությունը կստացվի 12 կմ, իսկ եթե ճանապարհը կառուցվի քառակուսու անկյունագծերով, (օգտվելով խնդիր 7-ից) ապա այն կստացվի

8√2 - 11,31... կմ երկարությամբ:

Այժմ նայենք նկ. 4-ին, որտեղ ճանապարհների ցանցը ունի 2 խաչմերուկ՝ M և N կետերում:

∠ANB = ∠ANM = ∠MNB = ∠DMC = ∠DMN = ∠CMN = 120°:

Օգտագործելով ∠DCM = 30° պայմանը կգրենք՝

2/MC - cos 30°; MC = 2/cos 30° = 2·2/√3 = 4/√3; DCM եռանկյան բարձրությունը հավասար է MC-ի կեսին՝ 2/√3, որտեղից


MN = 4 - 4/√3 = (4√3 - 4)/√3 = 4(√3 - 1)/√3:

Այժմ հաշվենք գյուղերը միացնող ճանապարհային ցանցի երկարությունը.

4MC + MN = 16/√3 + 4(√3 - 1)/√3 = 16 + 4√3 - 4 - 12 + 4√3 - 12√3 + 4·3 - 3(4√3 + 4) - 4(√3 + 1):

AN + BN + NM + MD + MC = 4(√3 + 1) - 10,928...

Ստացված երկարությունը փոքր է 11-ից: Պատասխան՝ գումարը բավարար է: Ինչպես տեսնում ենք Շտեյնների ցանցը քառանկյան և քառակուսու համար ունեն տարբեր տեսք:



նկ. 5

Խնդիր 10. Եռանկյան ներսում նկարեցին զուգահեռագիծ: Ապացուցել, որ նրա մակերեսը չի գերազանցում եռանկյան մակերեսի կեսից:

Լուծում: Տրված զուգահեռագիծը «առողջացնենք» այնպես, որ նրա մի զագաթը պատկանի եռանկյան կողմերից մեկին (նկ. 5): (Քայլ 1), հետո՝ 2 զագաթները (Քայլ 2), այնուհետև՝ 4 զագաթները (Քայլ 3): Այնուհայտ է, որ մնան ձևափոխությունը չի հակասում խնդրի պայմանին: Քայլ 4-ում և 5-ում կառուցվում են հավասարամեծ զուգահեռագծեր: Այս 1-ը ցուցադրում է, որ վերևի եռանկյան մակերեսը մեծ է սեղանի մակերեսից, իսկ սլաք 2-ը ցուցադրում է, որ աջ և ձախ եռանկյունները հավասար են: Այսպիսով՝ զուգահեռագծի մակերեսը չի գերազանցում եռանկյան մակերեսի կեսից:

Ռ. ԱՆՈՒՅԵՆԿՅԱՆ  
ԱրՊՅ մաթեմատիկայի և ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոն, մ. գ. թ., պրոֆ.

ՄԵԹՈԴԱԿԱՆ

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ (ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ

Մեր պետության գործունեության այլ ոլորտների շարքում կրթական համակարգը նույնպես վերափոխումների ընթացքի մեջ է: Ժամանակի ընթացքում հասարակական գարգացման, մարդկային և հասարակական մտածողության փոփոխությանը զուգընթաց անհրաժեշտ է դառնում այն վերափոխել նոր պայմաններին համահունչ:

Հանրակրթությունում ընթացող բարեփոխումների նպատակն է՝ որակի բարելավում ու ժամանակակից պահանջներին համապատասխան գործունեության ապահովում: Այս համատեքստում կարևոր ու հիմնական բեռը կրողը եղել և մնում է ուսուցիչը:

Յուրաքանչյուր ուսուցիչ դասարան մտնելուց առաջ ինքն իրեն հարց է տալիս՝ կհաջողվի՞, արդյոք, նախօրոք արդեն ընտրված, նպատակարարված մեթոդով վարել դասը:

Ուսուցման մեթոդը (հունարեն metodos՝ ինչ-որ տեղ տանող ճանապարհ) մանկավարժական գրականության մեջ բազմաթիվ, նույնիսկ իրարամերժ բնութագրումներ կարող է ունենալ, երբեմն՝

- ուսուցչից աշակերտ տանող մտքի ճանապարհ,
- ուսուցչի և աշակերտի համագործակցության եղանակ,
- սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման եղանակ,
- ուսուցչի և աշակերտի միջև որոշակիորեն կարգավորված գործունեություն և այլն:

Բայց քննարկելով թվարկած բնութագրությունները՝ հաստատ կարող ենք ասել, որ «ուսուցման մեթոդ» հասկացությունը չունի և չի կարող ունենալ դրզմատիկ բնութագրում: Այնուամենայնիվ, ամենաբնութագրիչ ձևակերպումը, ըստ իս, հետևյալն է՝ ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության միջոց է, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուսումնառության նախանշված արդյունքին հասնելու համար:

Այստեղ տրամաբանական ընդհանրացումն այն է, որ բոլոր մեթոդներն էլ ունեն գրեթե նույն նպատակը՝ սովորողների կարողություններին համապատասխան գարգացնել և հարստացնել բոլոր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու ընդունակությունները և ձեռք բերած կարողությունները կիրառելու հմտությունը:

Ինչքան էլ փոխվեն մեթոդներն ու եղանակները ուսուցման ասպարեզում, նպատակները մնում են գրեթե նույնը: Գիտության, տեխնիկայի գարգացման ու գիտատեխնիկական հեղափոխության ժամանակակից փուլում փորձություններին դիմակայելու պատրաստ սերունդ դաստիարակելը դարձել է գերխնդիր և ժամանակի հրամայական:

Այսօր բազմաթիվ նորարարական մեթոդներ միախառնվելով՝ կապվում են ինտերակտիվ ուսուցման շղթայով: Ինտերակտիվ ուսուցումն ուսուցողական տեխնոլոգիա է, որը հիմնված է խմբի անդամների փոխազդեցության, նրանցից յուրաքանչյուրի ինքնուրույնության և ազատության վրա:

Ժամանակակից ուսուցման մեջ խրախուսվում է համագործակցային փոքր խմբերով աշխատանքը, քանի որ այն հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին ազատ արտահայտվելու, կատարելու ինքնուրույն եզրահանգումներ (ինքնադրստորվելու): Եվ հենց այստեղ է վարպետությունը. այդ համագործակցման ընթացքում բանավեճին կամ քննարկմանը ճիշտ ընթացք տալու և ճիշտ եզրակացության հանգեցնելու նպատակով ընտ-

րում է այնպիսի հարցեր և հարցադրումներ, որոնք օգնում են խմբի անդամներին աստիճանաբար, փոխհանդգմամբ հասնել բուն նպատակին: Այդ ընթացքում չի կարելի աշակերտին ասել՝ «ո՛չ, քո ասածը ճիշտ չէ», կամ՝ «դու ճիշտ չես մտածում» կամ՝ «սխալ տեսակետ ես արտահայտում», այլ չկոտրելով ոչ մեկին, ինչու չէ, նաև յուրաքանչյուրի ասածի մեջ գտնելով ճշմարտության մի փոքրիկ հատիկ, միավորելով դրանք ձևագծի նման, առողջ հատիկները միացնելով՝ հասցնել ճիշտ ավարտին:

Բայց ցանկացած թեմա հնարավոր չէ մատուցել համագործակցային դասի ձևով կամ համագործակցային ուսուցման մեթոդով: Այստեղ, բացի դասաձևից, ոչ պակաս կարևոր են դասարանի «կարողությունը», սովորողների համագործակցելու կարողությունն ու պատրաստակամությունը: Քանի որ պետք է հաշվի առնել այն պահը, որ դասարանում կարող են լինել և՛ «զուլու պահողներ», և՛ պոտենցիալ լիդերության ձգտող աշակերտներ: Այս ամենից հետո ի՞նչ է պահանջվում ուսուցչից.

- դասաձևը, դասապլանը, առաջադրանքները կառուցել այնպես, որ համագործակցելու հնարավորություն ստեղծվի.
- խմբերը կազմավորել այնպես, որ նույն կարողություններով կամ հակումներով աշակերտները չընդգրկվեն նույն խմբում.
- հաշվի առնել նույնիսկ այն հանգամանքները, որ կարող է առանձին աշակերտների միջև կոնֆլիկտ առաջանալ, ուստի ուսուցիչը պետք է կարողանա կանխել հնարավոր ծախողումները.
- գործընթացը պարզ ու մատչելի հարցադրումներից տանել դեպի բարդ ու տրամաբանական հարցեր:

Չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր: Ցանկացած դասարան ու դաս անկրկնելի է ու եզակի: Ուսուցչի խնդիրն է մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին: Ուզում են առաջարկել համագործակցային մեթոդների կիրառմամբ «Նախնական գիմնդրական պատրաստություն» առարկայի մի քանի թեմաների ուսուցման օրինակներ:

Համագործակցային մեթոդներից ամենատարածվածը T-աձև աղյուսակի կիրառումն է: Այն կազմված է երկու բաժնից՝ «դրական կողմ», «բացասական կողմ»:

Առաջարկում են այսպիսի աղյուսակ, որը կարելի է կիրառել ինչպես անհատական աշխատանքի, այնպես էլ խմբային քննարկման ժամանակ:

Այսպես օրինակ՝ Ռազմարվեստի պատմությունից Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու դրական և բացասական կողմերն աշակերտը կարող է ցույց տալ T-աձև աղյուսակով՝ Թուրքմենչայի պայմանագրի վերլուծության կամ «1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմը» թեման ամփոփելու ժամանակ:

Կամ «Հայրուկային (ֆիդայական) շարժում» թեմայի մատուցման ժամանակ կարելի է փորձել կազմել այսպիսի աղյուսակ.

**T-աձև աղյուսակ**

չարժան օրական կողմը		չարժան բացասական կողմը	
1. հարկահանոթքունը սկսեց գրողացիների միջոցով.	2. կրճատվեցին բուրբախի զինված ջոկատների կամայականությունները:	1. երբեմն կատաճանքով գրողացիներին.	3. ֆիդայիներ փնտրելու հարձակում էին գրողի վրա և բախում ու զերեխարում գրողացիներին:

Այս աղյուսակը կարելի է օգտագործել ինչպես ողջ թեմայի, այնպես էլ դասի տարբեր փուլերի ուսումնասիրման կամ ամփոփման ժամանակ:


T-աձև աղյուսակը կիրառվում է թեմայի, խնդրի կամ պատմական հերոսի վերաբերյալ երեք տարբեր կարծիք կամ վերաբերմունք արտահայտելու համար՝ «դրական», «բացասական», «չեզոք» կամ՝ «այո», «ոչ», «չգիտեմ» կամ՝ «կողմ», «դեմ», «ձեռնպահ»:

Օրինակ՝ «Վարդանանց պատերազմը» թեման ուսումնասիրելու ժամանակ վասակ Մամիկոնյանի կերպարի վերաբերյալ կարելի է կազմել հետևյալ T-աձև աղյուսակը.

**T-աձև աղյուսակ «Վեմի դիագրամ» մեթոդ**

պր. դրական կողմ	ոչ բացասական կողմ	չգիտեմ
1. ապրտանքներից կազմված 3 բանակներից մեկի ղեկավարն էր.	1. դավաճանեց տված երդմանը.	---
2. Հայրը մարգարան էր.	2. տոհմական կազմաօրենքը չկրկնելու համար փախավ Սյունիք.	---
3. Հայրը արքունիքի և պարսից արքունիքի միջև դիվանագիտական հաշտեցման բաղձեր էր կատարում:	3. չկարողացավ գնալ հանուն հայրենիքի՝ զոհաբերելու քայլին:	---

Դիագրամը կազմվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս ձևի կողմերում գրանցվում են տարբերությունները, իսկ կենտրոնում՝ ընդհանրությունները:




Այդ դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով: Այն փորձված և արդյունավետ մեթոդ է՝ ուսումնասիրվող դասաձևում միևնույն և տարբեր հասկացությունների, հասարակական երևույթների միջև փոխառնությունները բացահայտելու և դրանով իսկ նյութի մատուցումն էլ ավելի մատչելի դարձնելու համար:

Օրինակ՝ վերոնշյալ դիագրամն առաջարկում են կազմել «Մասսայական բնաջնջման միջոցները» թեման անցնելու ժամանակ, երբ աշակերտները, առանձին-առանձին թվարկելով խոցման միջոցները, կարողանում են դրանք ճիշտ խմբավորել շրջանագծերի աջ և ձախ մասերում՝ ճառագայթաձև, ապա նաև կատարում են ընդհանուր եզրահանգում. դրանց ընդհանրությունն այն է, որ այդ ամենը համարվում են մասսայական բնաջնջման միջոցներ:

Մեկ այլ մեթոդ՝ «Պրիզման», մտածողության ընթացքը պատկերավոր դարձնելու պարզ ձև է, որի հիմնական նպատակը ներկայացված գաղափարի վերաբերյալ ինքնուրույն քայլերով առաջադրանքի եզրակակիչ փուլին հասնելն է:

**Պրիզմայի ձևով - Վեմի դիագրամ Թեմա - ԴԱՏԵՐԱԶՄ (տեսակները, տիպերը)**



է պատերազմի բոլոր տեսակներին:

«Պրիզմայի» մեթոդն ուսուցման և ուսումնառության ակտիվ մեթոդն է: Այն խրախուսում է սովորողներին ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ:


Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող երևույթի, հասկացության, գաղափարի վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է: Բերված օրինակը, որը վերաբերում է «Պատերազմ» թեմային, օգնում է սովորողներին ոչ միայն լավ յուրացնել նյութը, այլև տարբերակել պատերազմների բնույթը, նպատակն ու տեսակները և ուսուցչի ուղղորդմամբ քայլ առ քայլ գալ ընդհանուր եզրահանգման:

«Պրիզմայի» մեթոդը կիրառվում է բացառապես դասի սկզբնական խթանման փուլում՝ ապահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը, ակտիվացնելով և կապ հաստատելով սովորողների ունեցած գիտելիքների ու պատկերացումների, ինչպես նաև ուսուցանվող նոր նյութի միջև: Սրանով իսկ մեթոդի կիրառումն ապահովում է դասի հաջող մեկնարկը: «Պրիզմա» կարելի է կազմել նաև անհատապես, բայց առավել արդյունավետ է խմբային աշխատանքի ընթացքում: Խմբային քննարկումների այդ ձևով կազմակերպումն ապահովում է ակտիվություն, թարմություն, հետաքրքրություն:

Մեթոդն արդյունավետ է այն դեպքերում, երբ պահանջվում են կարճ, համառոտ բառերի, հատկանիշների, եզրույթների, արտահայտությունների թվարկումներ: Հնարը ենթադրում է արագություն և արագ կողմնորոշում, ուշադրության կենտրոնացում և մասնակիցների իրար հաջորդող և համաձայնեցված գործողություններ:

### ՄԵԹՈԴԱԿԱՆ

#### «Հասկացությունների, գաղափարների քարտեզագրում»



«Հասկացությունների քարտեզը» մտքերի և դրանց փոխհարաբերությունների տարածքային պատկերացումն է: Այս մեթոդական հնարն օգնում է գիտակցված ձևով սովորել նոր տեղեկությունները և նրանց միջև եղած փոխկապակցվածությունը:

Հասկացությունները յուրաքանչյուրը պարտեզ կազմելու գործընթացն ուսումնառության գործընթացում է, որը գրաֆիկական կամ գծագրական տեսք ունի և դրդում է սովորողին մտածել եզրույթների, գաղափարների, մտքերի ու հասկացությունների հարաբերակցության և փոխկապակցվածության մասին:

Հասկացությունները յուրաքանչյուրը պարտեզ կազմելու համար անհրաժեշտ է գլխավոր, առանցքային միտքը նշել թղթի մեջտեղում՝ ուղղանկյան կամ շրջանի տեսքով, այնուհետև նրանից բխող գաղափարները գրել կենտրոնական մտքից ճառագայթող ճյուղերին:

Մտքերի քարտեզագրումը կարելի է համարել մտազորի մի տարատեսակ: Իրականում երկուսն էլ նպաստում են նոր նյութի տարբեր մեկնաբանությունների կուտակմանը:

Ցանկացած թեմայի ուսումնասիրություն կարելի է կազմակերպել ամենատարբեր մեթոդներով: Ձինդեկն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն ընտրությունը չի կարող լինել ինքնանպատակ, կամայական, այսինքն՝ շատ կարևոր է մեթոդի ճիշտ ընտրությունը, քանզի դրանից է կախված թեմայի արդյունավետությունը՝ թե՛ մատուցման և թե՛ անրապնդման առումով:

Մեթոդն ընտրելիս կարևոր է ոչ միայն թեմայի ընտրությունը, այնպես էլ հաշվի առնել նաև դասարանի մակարդակը, սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

Մեթոդն ընտրելիս յուրաքանչյուրը պարտեզ կազմելու համար յայն մեթոդն ընտրում, որը քանակ է թեման դրան համապատասխանում, ինչ կտա դա աշակերտին:

Փորձառու ուսուցիչը թե՛ ավանդական և թե՛ ժամանակակից մեթոդների միախառնումից կհասնի լավագույն արդյունքի:

Ավանդական են համարվում բացատրական, զննական, պատմողական, դասախոսության և այլ մեթոդներ, երբ շեշտը դրվում էր ուսուցչակենտրոն ուսուցման վրա: Ինտերակտիվ մեթոդներն ուսուցման ժամանակակից մեթոդներ են. այստեղ շեշտը դրվում է աշակերտակենտրոն սկզբունքի վրա, կարևորվում են աշակերտի ինքնուրույնությունը, իր մտքերն արտահայտելու մեջ առավել ազատ լինելը, բանավիճելու և ընդհանուր ու ճիշտ հայտարարի գալու ընդունակությունները, գիտելիքների ձեռքբերման ընթացքում իր ակտիվ ու անմիջական մասնակցությունը:

Որ մեթոդն էլ ընտրելու լինի ուսուցիչը, նա նախ պետք է ճիշտ պլանավորի դասը, յուրաքանչյուր նոր դասանյութ պետք է հաջորդ դասաժամին սերտորեն կապվի նոր նյութին, և այդ ընթացքը պետք է կատարվի տարբեր մեթոդներով և մանկավարժական փոխկապակցված ու արդյունավետ, փոխներգործուն ու անհատական հնարներով: Այստեղ արդեն ճիշտ է ասված՝ «Մեթոդը այդ էս էն»: Փորձառու ուսուցչի այս հայտարարությունը, կարծում են, շատ հարցերի պատասխան է տալիս:

Ձինդեկը դասավանդման ընթացքում պետք է ճիշտ սկսի ու ընթացք տա գործընթացին: Նա պետք է հիշի, որ յուրաքանչյուր պարամունք բաղկացած է ներածական մասից (5-10 րոպե), հիմնական մասից (30-35 րոպե) և եզրակարգից մասից (3-5 րոպե):

Ներածական մասում զինդեկն ընդունում է հերթապահի զեկույցը, ստուգում աշակերտների արտաքին տեսքը, հայտարարում պարամունքի թեման, տալիս կենտրոնացնող հարցեր և այսպես նախապատրաստում նրանք բուն դասին:

Հիմնական մասում կատարվում է հին նյութի հարցում, որտեղ դասի ճիշտ ու արդյունավետ ընթացքը կախված է ընտրված մեթոդից կամ մեթոդներից:

Եզրակարգից մասում զինդեկն ամրապնդում է թեման՝ հարցերով կամ նշածս ինտերակտիվ մեթոդներից որևէ մեկի ընտրությամբ, հայտարարում գնահատականները և անհրաժեշտության դեպքում հանձնարարում տնային աշխատանք: Պարամունքի վերջում զինդեկը պարտադիր ստուգում է ուսումնական զենքի, հակազգեթի և նոնակների առկայությունը:

Ուզում են նշել ոչ պակաս կարևոր մեկ այլ հարցի մասին: Դա այն է, որ յուրաքանչյուր զինդեկ իր մանկավարժական գործունեության հենց առաջին օրը և հենց առաջին պարամունքից սկսած, պետք է ստեղծի փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտ: Ձինդեկի հրամանները, հրահանգները պետք է հնչեն խրոխտ, լակոնիկ, ճիշտ հնչողությամբ ու շեշտադրությամբ, խոսքը պետք է լինի համոզիչ, և որ կարևոր է, շփումը սովորողների հետ կատարվի գրական հայերենով: Մի խոսքով, զինդեկը պետք է միշտ ճիշտ կեցվածքով լինի, նա պետք է հետևի իր արտաքին տեսքին և հագուստին:

Չի բացառվում, որ սերն առարկայի նկատմամբ աշակերտների մոտ ձևավորվում ու բխում է զինդեկի նկատմամբ ունեցած հարգանքից: Սակայն դրան հասնելու համար զինդեկը պետք է օրինակ ծառայի սովորողներին՝ ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս: Տեսնելով իր ուսուցչի ճիշտ կեցվածքը, աշակերտի նկատմամբ մեծ հարգանքը, առարկայի իմացությունը, յուրաքանչյուր ձեռնարկած գործ մինչև վերջ հասցնելու պատրաստակամությունը, երիտասարդների մոտ ձևավորվում են կամք, բնավորության հաստատակամություն, իր խոսքին տեր լինելու և մեր երկրի ապագա քաղաքացիների համար անհրաժեշտ դրական այլ գծեր:

Ուսուցիչը նպաստում է սովորողների մեջ դրական անձնային հատկանիշների և միջանձնային որակների զարգացմանը, այդ թվում՝ ինքնուրույնություն, ինքնավերահսկում, համագործակցելու և ուրիշներին օգնելու պատրաստակամություն և այլն:

Ձինդեկը մշտապես պետք է զբաղվի ինքնակրթությամբ: Եվ ոչ միայն զինդեկը. այն ուսուցիչը, ով դադարում է կարգալու ու սովորել, չի կարող սովորեցնել: Այս իմաստուն խոսքերը վերաբերում են ցանկացած մասնագիտության մանկավարժին: Ուսուցիչը, զբաղվելով ինքնակրթությամբ, դրանով աշխատում է իր որակավորման բարձրացման ուղղությամբ և որոնում աշխատանքի ավելի արդյունավետ մեթոդներ: Ուսումնական գործընթացի որակի բարձրացման նպատակով ուսուցիչը կատարում է մշտական դիտարկում և ինքնադիտարկում:



Ձինդեկը պետք է նվիրված լինի իր աշխատանքին, բարձր պահի մասնագիտության վարկանիշը և մեծ պատասխանատվությամբ վերաբերվի իր պարտականությունների կատարմանը, պետք է ունենա լեզվական բարձր կուլտուրա, բացառի այլոց ինքնասիրությունն ու մարդկային արժանապատվությունը վիրավորող բառերի և արտահայտությունների գործածությունը:

Դասը մի բարդ իմացական պրոցես է, որի ընթացքում ոչ միայն սովորեցնում են, այլ նաև սովորում, սովորեցնում են սովորածը, իսկ եթե չեն սովորե՞լ...

Հարգարժան զինդեկներ, այսօր ձեզ է վստահված ապագա զինվորի ու հայրենիքի պաշտպանի ճակատագիրը, պատվով կատարեք ձեր առջև դրված խնդիրը:

**Ռ. ՄՈՒՍԱԵԼՅԱՆ**  
ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ԿԳ վարչության պետ

#### Մտքերի տարափ - «Մտազորի»



Այս պատկերները ստանալու համար ուսուցիչը գրատախտակի կենտրոնում գրում է մեկնարկային բառերը, որոնց շուրջը աշակերտները ճառագայթաձև գրում են զինատեսակները և մարդկային ուժի տեսակները, ապա ուսուցիչը տալիս է նոր առաջադրանք, որի կատարման համար աշակերտները 1-ին և 2-րդ գծապատկերների հիման վրա իրենք են գտնում ընդհանուր մեկնարկային «բանակ» բառը և կատարում հասկացությունների կամ գաղափարների քարտեզագրում, ինչի արդյունքում ստացվում է հետևյալ գծապատկերը:


Մտքերի քարտեզագրումը կարելի է համարել մտազորի մի տարատեսակ: Իրականում երկուսն էլ նպաստում են նոր նյութի տարբեր մեկնաբանությունների կուտակմանը:

Ցանկացած թեմայի ուսումնասիրություն կարելի է կազմակերպել ամենատարբեր մեթոդներով: Ձինդեկն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն ընտրությունը չի կարող լինել ինքնանպատակ, կամայական, այսինքն՝ շատ կարևոր է մեթոդի ճիշտ ընտրությունը, քանզի դրանից է կախված թեմայի արդյունավետությունը՝ թե՛ մատուցման և թե՛ անրապնդման առումով:



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԱՆԱԿՅՈՒՂԻ ԲԱՆՈՒՄԸ ԸՆԴՀԱՆՈՒՄ ԿՐԻՄԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԳՊՐՈՅՈՒՄ



Հայ անունը պարծանք է ինձ համար, այն չեմ փոխի աշխարհի բոլոր փառքերի հետ:

Խ. Արոյան

2013թ. նոյեմբերի 8-ը դարձավ Շուշիի խաչատուր Արոյանի անվան հիմնական դպրոցի տարեգրության ամենահարուստ էջերից մեկը: Այդ օրը երևանի Խ. Արոյանի տուն-թանգարանի տնօրեն Հովհաննես Զատիկյանի գլխավորությամբ դպրոցում բացվեց Մեծ լուսավորչի թանգարանի մասնաճյուղը: Համդի-սավոր միջոցառմանը ներկա էին ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը, փոխնախարար Ա. Սարգսյանը, Ստեփանակերտի համաճյուղի դպրոցի տնօրեն Ռ. Դադայանը, հանրապետության և շրջանների մանկավարժներ, աշակերտներ: Հնչեցին ուշագրավ ելույթներ Արոյանի գործունեության և կատարած դերի մասին:

Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Ն. Նալբանդյանը, ով արժևորելով Արոյանի դերն ու նշանակությունը, վերհանեց նրա մանկավարժական գործունեության առանձնահատկություններն ու նորարարությունները, որով հեղաշրջում կատարվեց և՛ հայ մանկավարժության, և՛ հայ գրականության մեջ: Նա նշեց, որ Արոյանը հավատարիմ մնաց Արարատի գագաթին արած իր ուխտին՝ գնալ, սովորել վերադառնալ և ծառայել հարազատ ժողովրդին: Չնայած նա կարող էր, բայց չնայած իր մտավոր վերածննդի վայր Դորպատուն, որի հետ շատ ու շատ թելերով էր կապված և որտեղ կարող էր հանգիստ, անհոգ ու ապահով կյանք ունենալ: Արոյանը իր կյանքով ցույց տվեց հարազատ ժողովրդին ինքնագոհությամբ ծառայելու օրինակ...

Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի տնօրեն Ռ. Դադայանի խոսքում ընդգծվեց Արոյանի մարդը, մանկավարժը, հայրենասերը, Հավերժի ճամփորդը...

Վ. Հակոբյանը՝ տողերիս հեղինակը, իր ելույթում ասաց, որ պարոն Զատիկյանի նախաձեռնությունը թանգարանի հիմնադրմանը հավասարազոր գործ է՝ միաժամանակ վերհանելով Արոյանի անմնացորդ նվիրումը իր ժողովրդին, իր ազգին:

Ս. Ասրյանը փաստեց, որ և՛ Շուշի, և՛ Ստեփանակերտի համաճյուղի դպրոցները ԼՂՀ առաջնակարգ կրթօջախներ են, որոնցում արդյունավետ աշխատանք է տարվում սովորողների կրթադաստիարակչական մակարդակը բարձր պահելու ուղղությամբ, և նշեց Արոյանի գործունեության կարևորությունը սերունդների կրթության գործում:

Արոյանի թանգարանի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Հովհաննես Զատիկյանը փաստեց, որ Արոյանի սկսած հայ գրականությունը շրջադարձային ուղի է ունեցել, և Արոյանը մեծերի մեջ մեծագույնն է, ում բացած ճանապարհով են անցել Չարենցը, բոլոր հայոց մեծերը՝ սկսած 19-րդ դարից:

Հ. Զատիկյանը երկու դպրոցների տնօրեններին՝ Ն. Նալբանդյանին և Ռ. Դադայանին պարգևատրեց ՀՀ ԿԳ նախարարության և թանգարանի պատվոգրերով, Վ. Հակոբյանին՝ ԿԳ նախարարության, իսկ Լ. Մկրտչյանին՝ թանգարանի պատվոգրերով՝ արոյանագիտության ասպարեզում ունեցած վաստակի և մայրենի լեզվի պահպանության ուղղությամբ անբասիր գործունեության համար: Նույնպիսի պատվոգրերի արժանացան Ստեփանակերտի համաճյուղի դպրոցից:

ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը նման գեղեցիկ նախաձեռնության համար Հ. Զատիկյանին հանձնեց նախարարության շնորհակալագիրը:

Դրանից հետո դպրոցի գեղարվեստական խմբի աշակերտները հանդես եկան գրական-երաժշտական համադրությամբ (կազմակերպիչներ՝ Գ. Սարգսյան, Լ. Դավթյան): Հավարտ միջոցառման՝ կտրվեց ալ ժապավենը, և բացվեց մասնաճյուղի մուտքը, որը կայացել է հիմնադրված թանգարանի հիմքի վրա:

Թանգարանի հիմնադրումը

Շուշիի վերածննդի պատմությանը խարսխված դպրոցի պատմությունը 2003թ. հոկտեմբերի 4-ին ևս մի վավերագիր կնքեց. դպրոցում հիմնադրվեց Խ. Արոյանի թանգարանը՝ տնօրեն Հ. Միրզոյանի նախաձեռնությամբ, որի հորդորով դպրոցի ուսուցչուհի Ս. Ալեքսանյանը երևանից բերել էր համապատասխան նյութեր:

Թանգարանի հարստացում Արոյանի ծննդյան 200-ամյակի առթիվ

Մեծ լուսավորչի 200-ամյակը համաժողովրդական տոն էր ողջ հայության համար: Հայությունը խանդավառությամբ էր տոնում իր մեծագույն զավակի երկդարյա հոբելյանը, ամենուր կազմակերպում միջոցառումներ: Միջոցառումների շրջանակներում մեր դպրոցի ուսուցչական պատվիրակությունը եղավ Քանաքեռում՝ Արոյանի տուն-թանգարանում՝ տնօրեն Ն. Նալբանդյանի նախաձեռնությամբ ու գլխավորությամբ: Նրանց շնորհիվ մենք բերեցինք այն ժամանակվա համար հարուստ նյութեր, որոնք ճոխացրին մեր հոբելյանական միջոցառումը և հարստացրին թանգարանը: Միջոցառմանը հաջորդեց շրջայցը թանգարանում, ուր ամեն ինչ դասավորված էր ճաշակով, ու ստեղծված էր համապատասխան կողորհոտ: Սակայն ցուցանմուշների համար բացակայում էր համապատասխան գույքը: Թանգարանում Ն. Նալբանդյանի ջանքերով տեղադրվել էր քանդակագործ Յուրի Հովհաննիսյանի կերտած Արոյանի հարթաքանդակներից մեկը, իսկ մյուսը՝ դպրոցի մուտքում (հովանավորներ՝ Ա. Դուլյան, Վ. Կասյան):

Կրթության և գիտության նախարարությունը (նախարար՝ Վ. Խաչատրյան) անմիջապես ձեռնամուխ եղավ ցուցադասարանների տրամադրմանը, և թանգարանն այդուհետև աչքի էր ընկնում իր կոկիկությամբ, որը դպրոցի հիմնադրող-ման և վերաբացման (2012թ. սեպտեմբերի 8) առիթով այցելուների ուշադրության կենտրոնում էր: Սակայն այլ է եղած ուժերով թանգարան ունենալը, այլ՝ մայր թանգարանի հովանավորությունը:



Կրթության թանգարանը՝ Մայր թանգարանի մասնաճյուղ

Նոյեմբերյան աշունը շքեղաշուք էր մեր կրթարանում և նոր երանգներ պարզեց մեզ: Երևանի թանգարանի տնօրեն Հ. Զատիկյանի իր աշխատակիցներով այցելեց Շուշիի դպրոց՝ հիմնադրելով Մայր թանգարանի մասնաճյուղը: Սա էպիսոպոս փոխեց թանգարանը՝ նշանավորելով որակական մեծ տեղաշարժ: Շրջում են թանգարանում, կարողում ցուցանմուշները և լցվում երախտագիտությամբ: չէ՞ որ սա հայրենակերտման մեծ իրողություն է: Մասնաճյուղի հարուստ նյութերը պատմում են Քանաքեռում ծնված մեծ լուսավորչի կյանքի և գործունեության ողջ ընթացքի մասին: Դրանցից տեղեկություններ ենք քաղում Արոյանի ծննդավայրի, Էջմիածնում նրա ուսումնառության, Ներսես Աշտարակեցու հիմնադրած Ներսիսյան դպրոցում Արոյանի ուսումնառության, նրա սիրելի ուսուցիչ Հարություն Ավանդարյանի կյանքի մասին:

Ցուցադասարաններում տեղ են գտել Արոյանի ձեռագրերի պատահիկներ, բանաստեղծությունների բնագրերի պատճեններ, տոհմածառի նկարներ, պատմական ակնարկներ Հայաստանի՝ խանական Պարսկաստանի և Սուլթանական Թուրքիայի տակ գտնվելու վիճակի մասին, Արոյանի հայրենասիրական հորդորները: «Մենք որ իրար քոմակ անենք, իրար պայծառացնենք, ծովն էլ տեղիցը վեր կենա, մեզ տակով չի կարա անել, ինչ թե օսմանցին, յա թուրքը»: Ուշագրավ են Արարատ լեռան վերելքի նկարագրությունը լուսաբանող գծագրերը, քարտեզները, նկարները, իր ուսուցչապետ Ֆրիդրիխ Պարրոտին նվիրված Արոյանի տողերը, Դորպատյան գրառումները: Ուշագրավ են և տարբեր ժամա-

նակների հեղինակային նկարներն ու մեծերի համարժեք մեջբերումները, ինչպես օրինակ, Ֆրիդրիխ Պարրոտի՝ մեծ գիտնականի ու Արոյանի ուղին հարթողի դիտարժան գնահատականը. «Ով Հայաստանը չի տեսել, ճանաչելով Արոյանին, կտեսնի Հայաստանը: Նա մի կտոր Հայաստան է, որ իր մեջ ունի նրա ամբողջությունը»:

Ցուցադասարանների «Արոյանը և արտասահմանյան գրականությունը» բաժնից տեղեկանում ենք,

լիս՝ հավիտյանս մշտաբուն պահելով ազգի ոգին:

«Ապրել և մեռնել հայրենիքի համար. ահա՛ տակավին վաղ պատանեկան տարիներից իմ ընտրած նպատակը...»:

«Թող ինձ այսուհետ տգետ կոչեն, լեզուս բաց ա էլել՝ իմ ընտիր, իմ սրտի սիրական ազգ, թող տրամաբանություն գիտցողը իրան համբարի համար գրի, ես՝ քո կուրած, շվարած որդին, քեզ համար...»

«Երեխեք, թե ազգասիրությունն ու հայրենասիրությունը ձեզ վնաս տա, անիծեցեք, թե օգուտ, օրինեցեք, ասածներս մտքներդ բերեք...»:

«Կամիմ, պատրաստ եմ հոգով և մարմնով ի խաչ ելանել ի սիրո առ հայրենիս: Չեմ այս ցնորք տղայական, այլ հաստատ հոժարութիւն և փափագ առն կատարելու...»:

«Հայոց ազգ, Հայոց ազգ, ձեր ջանին մեռնիմ, Հայոց ազգ, քո հողին մատաղ, Հայոց աշխարհ... Ձան-ջանի տվե՛ք, իրար սիրեցեք, դուք էն աշխարհի ծնունդն եք, էն ազգի զավակը, որ աշխարհ ամենայն զարմացրել են ու կարմացնեն: Դո՛ւք, դո՛ւք իրար թասիք բաշեցեք, ձեր հողն ու ազգը պաշտեցեք...»:

«Շունչդ տուր, հոգիդ, բայց քո Հայրենիք մի՛ տուր թշնամյաց, ընկնիլ սարեսար, լինիլ չարաչար, ծառա օտարաց կամ գերի անճար...»:

Արոյանի պատգամները դարձրել են շարունակական կրթում են մեր սերունդներին: Ազատագրական պայքարի բովանդակում անցած ժողովուրդը ապավինում է մարդկության մեծագույն մտածողներից մեկի՝ Արոյանի պատգամներին՝ «դայիմ բռնելու» ազգի եռտանգին՝ մայր հայրենիքը, ոսկեղենիկ մայրենին, սրբագնասուրբ հավատը:

Հ. Զատիկյանը, հիմնադրելով թանգարանի մասնաճյուղը, միաժամանակ այն հարստացրեց բերած գրականությամբ, որում մեծ տեղ են զբաղեցնում Արոյանի երկերի լիակատար ժողովածուները, գրախոսականներ, «Վերջ Հայաստանի» վեպի տարբեր թվագրությունների հրատարակություններ, Պիոն Հակոբյանի, Արսեն Տերտերյանի հեղինակած գրքերը, առանձին հրատարակությունների Արոյանի երկեր, Վենետիկի Սուրբ Ղազար կղզու հրատարակության գրքեր, ընթերցարաններ, ինչպես նաև իր կազմած «Խաչատուր Արոյանի անհայտ բացակայումը» գիրքը, որում տեղ են գտել մի շարք հեղինակների, այդ թվում՝ Բակունցի տեսակետներն ու կարծիքները, Արոյանի քիչ ուսումնասիրված ստեղծագործություններն ու հասարակությանը չներկայացված առակներն ու բայաթիները:

Արոյանի ժառանգությունը անսպառ աղբյուր է հայի ու Հայաստանի մասին, որը Նոյի ժամանակներից ընդվզումների ու անձնվեր մաքառումների շնորհիվ մեզ է փոխանցել իր մեծագույն գանձը, որ համայն հայության համար փափագելի հնչողություն ունի՝ Հայրենիք:

Վարդիթեր ՀԱԿՈՒՅԱՆ  
Շուշիի Խ. Արոյանի անվան հիմն. դպրոցի հ. լեզվի և գրակ. ուսուցչուհի

Արոյանի դասերը

Թանգարան այցելող յուրաքանչյուր այցելու համակվում է ազգասիրությամբ, քանզի հայրենասիրական հզոր շնչով սերունդներ կրթող լուսավորիչը մեծ դասեր է տա-



ՃՆՈՐԱՆԴԵՍ

ՄԵԾԱՐՎԵՅ ԱՍԵՂՏԱԳՈՐԾՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Սատաշա Պողոսյանի անունը մինչև վերջին ժամանակներս հնչում էր որպես հայոց լեզվի և գրականության օլիմպիականներում, շարադրությունների մրցույթներում հաղթած աշակերտների ուսուցչուհի: Այնուհետև նրա անվանը սկսեցինք հաճախակի հանդիպել «Լուսարարի» էջերում՝ որպես հետաքրքիր հոդվածների հեղինակ: Իսկ վերջերս նրան ճանաչեցինք իբրև գրքի հեղինակ: «Ուսուցչի իմ թղթապանակը»... այսպես է կոչվում մեթոդական, ուսուցողական-մանկավարժական հոդվածների նրա ժողովածուն, որը հրատարակվել է ԼՂԿ կրթության և գիտության նախարարության երաշխավորությամբ և ֆինանսական աջակցությամբ:



Սարակայնության ներկայացուցիչներ: Շնորհանդեսն սկսվեց աշակերտների էլույթով, նրանց որոնք գրքի հերոսներն են, և որոնց շուրջ էլ մանկավարժի մտորումները, խոհերը դարձել են ժողովածուի նյութը: Գիրքը յուրատեսակ երկխոսություն է ուսուցչուհու և աշակերտների միջև, որը շարունակվեց նաև միջոցառման ընթացքում, երբ ուսուցչուհին, կանգնելով աշակերտների կողքին, խոստովանեց, որ իր՝ մանկավարժի բարդ ու պատասխանատու աշխատանքի պարզատարությունը աշակերտների անկեղծ գնահատումն է, նրանց հետ շփման ամենօրյա բերկրանքը: Բոլոր ժամանակներում ուսուցչի առաքելությունը նույնն է. նա խորագրաց մի անհատականություն է, որը պետք է հավատարիմ լինի իր պատվաբեր կոչմանը, լինի ուսուցանող և ստեղծարար, մարտահրավերներին դիմակայող անհողող կամքով, հաստատականությամբ: Մեր օրերի ուսուցիչն ավանդական ձևերին զուգահեռ կիրառում է նոր մեթոդներ, նա կանգնում է նոր բացահայտումների առաջ և իր հետ բացահայտումների մղում աշակերտներին: Ուսուցիչը պետք է տիրապետի հրապարակային խոսքի արվեստին, նա նաև արդարության դատավոր է: Ն. Պողոսյանը, իր իսկ հնչեցրած այս «պոստուլատների» ամխոտոր կողմն է: Շնորհանդեսի խոստովանությամբ՝ չնայած գրքում ամփոփված են հետպատերազմյան շրջանի իր մանկավարժական գործունեության արդյունքները՝ ի մի բերված ընդամենը մի քանի ամսվա ընթացքում, ԼՂԿ գրողների միության նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Չակոբյանը, ում մտախոհացմանը իրագործվել է գրքի շնորհանդեսը, այնպես էլ համաձայն չէ այդ մտքին: Նրա կարծիքով, գիրքը միանգամից չի ստեղծվում: Դա մնան է մեծ սարի լանջին բխած աղբյուրի, որն այդ պահին չէ, որ բխեց. այն տա-

րիներով, մաքառումներով հողի ընդերքով գնացել է և նոր մի տեղ բխել: «Մենք այդ բխումը տեսանք այս գրքով»,- ասաց նա: Եվ թվարկելով գրքի արժանիքները՝ ընդգծեց նրա գործառնական նշանակությունը: «Սովորաբար ուսուցչին համեմատում են սերմնացանի հետ: Այս տրամաբանությամբ՝ այս գիրքը ծնվել է ակոսի մեջ»,- ասաց Վ. Չակոբյանը: Նա ցավով նշեց, որ պատերազմից հետո լավ մանկավարժները քիչ են՝ նկատի ունենալով նրանց, ովքեր իրենց գործին վերաբերվում են ստեղծագործաբար և ուրախությամբ հայտնեց, որ ի դեմս Ն. Պողոսյանի, տեսնում է վերածնվող Մարտակերտի մտավորական դիմագծի վերակենդանանալը, որ երբևէ ունեցել է երախտավոր մտավորական Շահեն Օհանջանյանի և այլոց շնորհիվ:

Շրջվարչակազմի ղեկավար Վլադիկ Խաչատրյանը նույնպես արտահայտեց իր ուրախությունը, որ իր ղեկավարած շրջանը Սատաշա Պողոսյան ուսուցիչ ունի: Նա դրանում նոր չի համոզվել: Չինգ տարի ղեկավարելով կրթության համակարգը՝ որպես նախարար, ամեն տարի սեղմել է Ն. Պողոսյանի ձեռքը՝ իր շնորհակալությունը հայտնելով նրան օլիմպիականներում և շարադրությունների մրցույթներում հաղթող աշակերտներ տալու համար: Եվ այսօր նորից շնորհակալություն է հայտնում՝ ստեղծագործող ուսուցիչ լինելու կապակցությամբ, ով գաղափարապաշտ և հայրենապաշտ սերունդ է դաստիարակում:

Գրքի խմբագիր, կրթության և գիտության նախարարության մասնագիտական կրթության և գիտության բաժնի պետ, հոգեբանական գիտությունների թեկնածու Լուսինե Ղարախանյանն անդրադարձավ մոլեռանդ ուսուցչի, նախանձախնդիր մտավորականի, զինվոր մանկավարժի կերպարին, որպիսին Ն. Պողոսյանն է և եզրակացրեց. «Նմանների շնորհիվ է, որ կարելի է պատկերացում կազմել ուսուցչի իշխանության մասին: Նրանք ստրատեգիկ անձինք են, ինչպես սահմանի առաջին գծում կանգնած զինվորը: Այդպիսի ուսուցիչներով կարող է ուժեղ լինել կրթության համակարգը, և նրանք են ձևավորում գիտական, էլիտար ուսուցչության բանակը»:

Իր տեսակետը հայտնեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանը:

Նոր Մարտաշախի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության բազմամտործ ուսուցչուհի Անահիտ Լոռեցյանի համար հայտնություն է Սատաշա Պողոսյան մանկավարժը և հպարտություն, որ իրենց կողքին ապրում է մեկը, որի համար մանկավարժությունը ոչ միայն աշխատանք է, այլև կենսակերպ, ում համար դպրոցը ոչ թե աշխատավայր է, այլ աշխարհ, որտեղ նա անընդհատ որոնում է և գտնում այն, ինչի առաքելությամբ աշխարհ է եկել:

Շնորհանդեսին ոչ միայն մեծարվեց նրա հեղինակը, այլև արժևորվեց ստեղծագործող անհատը, մտավորականը՝ սկզբունքային, անկոտրում, քաղաքացիական խիզախ դիրքորոշմամբ, ում կարիքը շատ է զգում հասարակությունը:

Ս. ԽԱՉԱԿՅԱՆ

ՕՐԻՆԱԿԵԼԻ «ԹՐԹԱՊԱՆԱԿ» ԱՆՆՐԱԾԵՑ ԲՈՒՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Չրապարակի վրա է «Մանկավարժի գրադարան» մատենաշարին պատկանող մի գիրք՝ «Ուսուցչի իմ թղթապանակը» խորագրով, որն ինձ գրավեց երկու պատճառով: Նախ, որ այն ուսանելի դիտարկումների և խորհուրդների ժողովածու է՝ չափազանց կարևոր մեթոդական նշանակություն ունեցող գիրք, որ հեղինակը Սատաշա Պողոսյանն է, իմ երբեմնի ուսանողուհին՝ խելոք, համեստ, ուշին, ընտրած մասնագիտությանը սիրահար ու մկիրյալ:

Դեռևս ուսումնառության տարիներին Սատաշան աչքի է ընկել դպրոցական տարիներին ձեռք բերած գիտելիքների որոշակի պաշարով և ընտիր մասնագետ դառնալու վճռականությամբ: Եվ դա նկատվում էր գործնական պարագայումների ու քննությունների ընթացքում, ինչպես նաև ուսանողական գիտաժողովներում ունեցած էլույթների ժամանակ: Ուրախությամբ արդյունքն առկա է: Սատաշա Պողոսյանը ոչ միայն ԼՂԿ աշխարհի վաստակաշատ և օրինակելի ուսուցչուհիներից է, այլև մեր ոսկեդեմիկ լեզվի հմուտ մշակ ու մեսրոպաշունչ գրականության սերմնացան:

Խղճի մտոք կարող ենք նշել, որ Սատաշա Պողոսյանը պատկանում է մեր հանրապետության ստեղծագործող այնպիսի ուսուցիչների շարքին, որպիսիք են Խորեն Ղազարյանը, Միքայել Բեգլարյանը, Խորեն Բաղդասարյանը և ուրիշներ, ովքեր շարունակում են երջանակալիշատակ Շահեն Օհանջանյանի, Լևոն Չարությունյանի, Նորայր Ավետիսյանի և մյուս վարպետ ուսուցիչների լավագույն ավանդույթները: Սատաշայի գիրքը սովորական էլույթների և հոդվածների հավաքածու չէ: Այն պատասխանատու մանկավարժի կուսակուտակ վաստակի, կաթիլ-կաթիլ ամբարան փորձի արդյունք է, աշակերտների հանդեպ ունեցած մայրասիրտ ուսուցչուհու, անխնայ ջանքերի, հարազատ կրթությանի հեղինակությունը բարձր պահող մկիրյալի ընծա: Այս մտորումներն առաջին հերթին հեղինակի ստեղծագործական-հեռանկարային աշխատանքի արդյունք են: Տեղին է նշել հոգեբանական գիտությունների թեկնածու Լուսինե Ղարախանյանի կարծիքը, որ ընդգծված է գրքի մուտքում: «Թերթելով Սատաշա Պողոսյանի գրքի էջերը, գրում է Լուսինեն,- համոզվում ենք, որ գործ ունենք իր տեսակի մեջ եզակի «առաջնորդ» ու «զինվոր» մտավորականի հետ: Ժամանակն իր պատվերով է ծնել ուսուցչի այս հրաշալի կերպարին՝ կերպար, որում զուգակցվել են դասական ուսուցիչն ու հայ մանկավարժը, ավանդույթներ չչրջանցող ու միաժամանակ ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներին ու մեթոդներին տիրապետող մասնագետը, ի վերջո, մարդ, որ մտահոգ է սերնդի ու նաև հասարակության արժեքային համակարգի ձևավորման խնդիրներով»: Իսկ տաղանդավոր բանաստեղծ Վարդան Չակոբյանը, իրավացիորեն՝ հանձին Սատաշայի, տեսնում է «երևելի մի հայուհու, ով համարում է Արցախի մկիրյալ մտավորականության շարքերը»:

Այստեղ կարևորում են բացել փակագծերը՝ ընդգծելու ոչ միայն ուսուցչուհի Սատաշայի, այլև արարող-մանկավարժ Սատաշայի նախասիրություններն ու գիտելիքների բազմաշերտ երանգները:

Իր գրքի նախաբանում Սատաշան ուսուցչին համարում է արարող անհատականություն: Ինքն էլ հենց այդպիսին է: Այլպես նրան չէր հաջողվի ստեղծել մի այնպիսի հու-շամատյան, որտեղ ամփոփված են մեթոդական, ուսուցողական, մասնագիտական, գրականագիտական և այլ կարգի նյութեր՝ շղախված կիրթ, գրագետ խոսքի շափաղումներով: Այդ հաջողության գաղտնիքը լավ հայտնի է Սատաշային, վկան՝ հենց իր հետևյալ դիտարկումը. «Դասավանդման արվեստը միայն առարկային լավ տիրապետելը չէ: Այն հոգեհմա մի գործողություն է, որ զուգակցվում է ուսուցչի անձնային որակների, մանկավարժական ջանքերի կախի ու ոգեշնչվածության, պարտքի ու պատասխանատվության զգացման հետ»:

Ելնելով Սատաշայի այս ճիշտ եզրակացությունից՝ ավելացնենք, որ ուսուցչի ստեղծագործական աշխատանքի հաջողության գրավականը նրա բազմակողմանի զարգացածությամբ, կյանքի ճանաչողությամբ, պատկերավոր մտածողության, բառապաշարի հարստության, աշխատասիրության, որոնման ծարավի ու գտնումների մեջ է: Ստեղծագործող մանկավարժի կենսաթրթիռ ու հոգևոր այս բարեմասնություններն են հնարավոր

ությունը ընձեռել Սատաշային՝ արարելու այն աշխատանքները, որոնք պատիվ կարող են բերել յուրաքանչյուր մանկավարժի:

Սատաշայի դիտարկումները նկարագրական բնույթ չեն կրում, որովհետև, ինչպես ինքն է հաստատում, «Դասին կենսունակություն է հաղորդում ստեղծագործական մտեցումը, որն այն դարձնում է իմացականորեն և հուզականորեն հագեցած»: Եվ լավն այն է, որ այս համոզմունքը քարոզչական ցուցում չէ, այլ հաստատվում է օրինակելի դասերի վերլուծությամբ ու գնահատմամբ: Այս առումով կարելի է նշել այն համոզարարությունների իրականացումը, որոնք ամբնվում են հայ դասականների երկերի վերլուծությանն ու գնահատմանը: Դրա հաջողված դրսևորումներից է Պ. Դուրյանի, Ավ. Իսահակյանի, Մուրացանի, Նար-Դոսի, Վ. Տերյանի, Մ. Մեծարեցի, Ե. Չարենցի ստեղծագործություններին նվիրված գրավոր աշխատանքների ու քննարկումների կատարումն աշակերտների կողմից: Այս ուղղությամբ իրականացված աշխատանքները բացահայտում են հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սատաշա Պողոսյանի բազմակողմանի զարգացածության գործոնը:

Կարդալով նրա աշխատանքները՝ միաժամանակ ծանոթանում ես հոգեբան մանկավարժի կարողություններին: Եվ ոչ միայն այդ: Սատաշայի առանձին աշխատանքներում երևում է ուսյալ պատմաբանը, զգագրագետը, հայրենասեր զինվորյալը: Կցանկանայի նաև ընդգծել նրա գրականագիտական հայացքների առկայությունը: Չայ դասականներին նվիրված դասերի ընթացքի նրա լուսաբանումն ու գնահատումն ապացուցում են ուսուցչուհու խորաթափանցությունը գրականագիտության տարբեր բաժիններում: Դրա լավագույն ապացույցներից մեկը «Գրողի բանաստեղծական արվեստի ուսումնասիրությունը՝ որպես աշակերտների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց» աշխատանքն է: Անդրադառնալով Արցախի գրական օջախի ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումներին՝ Սատաշան կոնկրետ վերլուծում ու գնահատում է Վարդան Չակոբյանի բանաստեղծական արվեստը: Չենվելով Մեծ Լոռեցու «Ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մի մեծ ստեղծագործություն է ու մի ամբողջ աշխարհ» իմաստությունը, Սատաշան համոզիչ օրինակներով հաստատում է այն իրողությունը, որ Վ. Չակոբյանը արդի հայ պոեզիան հարստացնում է ոչ միայն թեմատիկ-գաղափարական շերտերով, այլև լեզվաճանաչ ինքնատիպ դրսևորումներով:

Ն. Պողոսյանը ժամանակի ոգին ընկալող մանկավարժ է: Նրա գնահատումներում հստակ երևում է այն ուսուցչուհին, որն ամբողջությամբ մեջնարում ու բացահայտում է նոր սերնդի կենսահայեցողությունն ու բարոյահոգեբանական աշխարհը: Որպես վկայություն կարելի է մատնանշել «Սպանված աղավնի» կամ գրական կերպարի արտացոլումը մեթոդական աշակերտության ընկալումներում» մասնագիտական-տեսական աշխատանքը: Ուշագրավն այն է, որ ուսումնադաստիարակչական առօրյա աշխատանքի արդյունքում բացահայտվում է նոր սերնդի բարոյական ընկալումների աշխարհը՝ սիրո և ընտանիքի ժողովրդական առողջ ավանդույթներին հավատարիմ: Կցանկանայի անդրադառնալ մի հարցի, որն ամբնվում է մամուլին: Կոնկրետ նշեն՝ թե «Լուսարար» թերթը (խմբագիր՝ Սվետլանա Խաչատրյան) չի տեսեր, չխրախուսեր, չտպագրեր Սատաշայի հոդվածները, հագիվ թե ծնվեր նրա գիրքը, որի համար միայն դրվատանքով կարելի է խոսել խմբագրի մասին:

«Ուսուցչի իմ թղթապանակը» ժողովածուի հեղինակը ժամանակակից ուսուցչի օրինակելի կերպար է: Դասավանդման արդի մեթոդների խորքային իմացությունը, ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներին տիրապետելն ապացուցում են, որ Ն. Պողոսյանը ոչ միայն անցյալ դարի երկրորդ կեսի, այլև 21-րդ դարի հրթիռային արագությամբ վերափոխվող մանկավարժության օրինակելի ներկայացուցիչներից է, որի «Թղթապանակը» անհրաժեշտ է դարձնել սեղանի գիրք՝ բոլոր ուսուցիչների համար:

Սոկրատ ԽԱՆՅԱՆ  
Բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր

ԱՆՊՐԱՂՈՐ

ԵՐԿՐԱԶԱՐԺԸ ՆԱԵՎ ԱՐՑԱԽԻ ՑԱԿՆ ԵՐ

Դեկտեմբերի 7-ին լրանում է Սպիտակի մեծ երկրաշարժի 25 տարին

1988-ին Արցախի ժողովրդի պայքարը հաճախակի և անսովորական կերպով հասնում էր համայնության...

1988-ին, երբ և՛ էր, և՛ չէր, հայերիս միավորման մեկ այլ առիթ էլ եղավ՝ ողբերգական: Դեկտեմբերի 7-ին ժամը 11-ն անց 41 րոպեին...

Ստորգետնյա ցնցումներն Արցախում, Ստեփանակերտում էլ զգացվեցին: Առանձին ուշադրություն չդարձրինք...

Մաքսիմ Սիրոբյանը 1988 թվականին Ստեփանակերտի քաղաքի գործկոմի նախագահն էր: Երկրաշարժի մասին բոլոր լսելու շատ չանցած՝ Երևանից նրան զանգահարում է Ջորի Բալայանը...

Մեր օրը փակվեց և՛ հարձակման, և՛ զրոյան: Բայց էլի հանգստանալ չէր լինում: Բնակիչները լացում-պարտում էին, որ օգնենք, հանենք...

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

Նազիտացված կառույցը դա էր: Ջոկատի հետ էր ակունքի տնօրեն Ասլան Գրիգորյանը:

Երբ Լենինական հասան, արդեն զիջեր էր: Ճամբարի համար տեղ ընտրեցին ու վրաններ խփեցին: Փրկարարական աշխատանքների կազմակերպման հանրապետական շտաբում...

Երկու օր անընդհատ աշխատեցինք և այնքան էինք տարված, որ չէինք նկատում երբ էլ լուսանում, երբ՝ մթնում: Գիշերները աշխատում էինք լուսարձակների տակ: Թանկ էր յուրաքանչյուր վայրկյանը, որովհետև փլատակների տակ կենդանի մարդ կարող էր գտնվել:

Ուտելու բան կար:

Չկար: Վրաստանից փաթեթներով բուտերբրոդներ էին ուղարկել, նարինջ, «Բորժոմի» հանքային ջուր: Տեսանք ու նոր հասկացանք, որ հարկավոր է սնվել:

Չկար: Վրաստանից փաթեթներով բուտերբրոդներ էին ուղարկել, նարինջ, «Բորժոմի» հանքային ջուր: Տեսանք ու նոր հասկացանք, որ հարկավոր է սնվել:

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

ստեղծել: Վերադարձի հաջորդ օրն իսկ Ա. Գրիգորյանը ձեռնամուխ եղավ այդ գործին: Նրա հիմնադրած փրկարար կառույցը, որը գործում էր կամավորական հիմունքներով, պետք է պատրաստ լիներ՝ կանգնելու նաև հայրենիքի պաշտպանության դիրքերում: 1990թ. մայիսին մարզխորհրդի գործկոմը որոշում ընդունեց փրկարար ծառայություն ստեղծելու մասին:

Քաղաքացիական պաշտպանության շտաբ կար, բայց...

Ինձ համար շատ ցավոտ հարց արծարծեցիք: Երբ Շարժումն սկսվեց, քաղաքացիական պաշտպանության աշխատողները (ես սա դանդաղեցիք եմ ասում) ժողովրդին թողեցին բախտի ընտանացիքին ու լքեցին երկիրը:

Մարզային շտաբի՝ մասին է խոսքը: Այո: Ռոբերտ Քոչարյանի հանձնարարությանը քաղաքացիական պաշտպանության շտաբ ստեղծեցի: Քաղաքացիական պաշտպանության շտաբի խնդիրները շատ են՝ բնակչության տարհանում, նրա պաշտպանությունը ռմբակոծություններից ու հրետակոծություններից և այլն: Փրկարար գործունեությանը զուգահեռ մենք պետք է զբաղվեինք պատերազմի ժամանակ փրկելու մարդկային բազմաթիվ կյանքեր:



Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

Մեր տեսածը սարսափելի երազի էր նման: Չէինք հավատում, որ նման բան հնարավոր է: Առաջին օրերին շուկի մեջ էին: Անօթևան մարդիկ, փրկատակներ, անհամար դաժառնություններ...

մարդն ամեն ինչի համակերպվում է, ամեն ինչի՝ հարմարվում...

Վ. Ուլուբաբյանը նկատում է, որ հայրենասերներն արդեն գտնվում էին երկրաշարժի դժվարագույն օրերին: Ստեփանակերտի կենտրոնական հրապարակում դեկտեմբերի 7-ին հարյուրավոր մարդիկ էին հավաքվել, ոչ թե ցույցի, այլ որ հնար գտնեին՝ զնալու աղետի գոտի: Հիշում է Սամվել Աղայանին, որը հետագայում, պատերազմի ժամանակ աչքի ընկավ քաղաքային, բժշկական Աշոտ Աղայանին, որը նաև իրենց էր բուժօգնություն ցույց տալիս:

Մեր վիճակն էլ լավ չէր, ասում է: Ջուր չկար՝ խմելու, վաղվա: Բեռնատարներով լիմոնաղ էին բերում, և լիմոնաղով էինք լվացվում ու հետո հնար չէինք գտնում քաղցր մեզմից մաքրելու: Տավախքի հայերը մանդարին էին տեղ հասցրել և ուզում էին անպայման դարաբաղցիների ճամբարը բերել: Ամբողջ օրը միավորել էինք մեզնալ և ընդհանուր սուղ էր: Ջարմանակին այն էր, որ լեմինականցիները հենց իմանում էին, որ դարաբաղցի ենք, մոռացած ցավ ու տառապանք, երկրաշարժի թեման փոխում ու Ղարաբաղով էին հետաքրքրվում: «Ո՞նց են գործերը, ի՞նչ նորություն կա»: Դա շատ էր ոգևորում մեզ: Մեր ներկայությունից էլ իրենք էին քաջալերվում, քանի որ ծանր վշտի մեջ մեզնալ չէին, դարաբաղցիներն իրենց կողքին էին: Կամավորներ կային նաև սփյուռքից: 1988-ին Ղարաբաղի հարյուր միավորել էր աշխարհի հայությանը, ինչը նպաստեց երկրաշարժի օրերին ավելի համախմբվելու, համատեղ հաղթահարելու դժվարությունները:

Մահեր, դիակներ... Այդ ամենն այն ներգործությունն էր չի թողել, որքան որ մանկական խաղալիքները՝ թափված շենքերի մոտ, փրկատակների մեջ... Մի սիկնիկ այնքան էր մասն կենդանի երեխայի... Սարաբաբեր պատկեր էր: Ավելի ազդեցիկ բան չէմ տեսել կյանքում ու նման ապրումներ չեն ունեցել երբևէ:

Վ. Ուլուբաբյանը ուշադիր հետևում է աղետի գոտու անցողիկներին, խանդավառվում, երբ նոր բնակելի շենք, մանկապարտեզ են կառուցում, գործարան, որպեսզի մարդիկ աշխատանք ունենան: Անշուշտ, տարիների հետ երկրաշարժի պատճառած ցավը կմեղմանա, բայց շատ կուզենար, որ նոր հասակ առնող երեխաներին շուրջըլոր ոչինչ չհիշեցներ ահավոր ողբերգության մասին:

Արցախից աղետի գոտի են մեկնել նաև սեփական մախաձեռնությամբ: Ա. Գրիգորյանը հիշում է Բերդաշենից Նելսոն Սողոմոնյանին, որը տեղ էր հասել 30-հոգանոց խմբով, և ինքն է նրանց վրաններ տվել:

Աղետյալներին օգնելու նպատակով նաև դրամահավաք է կազմակերպվել: Տարեվերջին մոտ արցախցիները հանգստանալ էին շուրջ 5 միլիոն ռուբլի:

Քսանիինգ տարի է անցել ողբերգական 1988-ի դեկտեմբերի 7-ից: «Աղետի գոտի» հասկացությունը, ցավոք, շարունակում է մնալ իրողություն: Վերջին մի քանի տարիներին մեծածավալ աշխատանքներ են կատարվել, թափ է հաղորդվել շինարարությանը, առանձնապես՝ բնակարանային: Սակայն առայսօր աղետի հետևանքները հաղթահարված չեն, դեռ կան մարդիկ, որ ապրում են տնակներում, կարիք ունեն օգնության: Հավատանք, որ շուտով «աղետի գոտի» հասկացությունից հիշողություն կմնա: Հավատանք, որ, ինչպես հանրահայտ երգում է ասվում, «Նորից գարուններ կգան, և դու կծաղկես, Հայաստան»:

\*\*\*

Արմեն Հակոբյանը երկրաշարժի զոհերի հիշատակին տուֆից արձան քանդակեց՝ գլուխը ձեռքերի մեջ առած սգացող այա: Երկրաշարժից ամիս անց՝ 1989-ի հունվարին, տեղադրվեց Մեծ Հայրենականի նահատակների հիշատակը հավերժացնող համալիրի մուտքի մոտ: Ամեն տարի դեկտեմբերի 7-ին պետական այրերը, ստեփանակերտցիները այցելում են այստեղ և հարգաբքի տուրք մատուցում բնութային ահեղ տարերքի գոհ գնացած մեր հայրենակիցների հիշատակին:

ԽՃԱՆԿԱՐ

Լույս է տեսել

ԱՆՈՒՐՁՆԵՐԻՅ՝ ՄԻՆՉԵՎ ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐԶ

Ինչ լավ է, որ աչքդ ընթերցածից կարողանում է իր վրա առնել տողերից առկայ- ծող լույսը և մտքիդ նշան է հղում: Աստված այդ կայծը նվիրում է եզակիներին, ում մենք պատվում ենք շնորհալի անվանելով:

Վանիկ Նովիկովի պարագայում էլ այսպես էր. ժամանակ առաջ «Լուսարարի» էջերում հաճախակի երևացող անծանոթ հեղինակի պատմվածքներից ու ֆելիետոններից աչքս հենց այդ շողն առավ ու հետաքրքրությունս շարժեց: Ծանոթությունը հետագայում վերածվեց գործընկերության, և այս է քանի տարի նա Արցախի հանրային ռադիոյի եթերաժամերին իր տեղն ունի:

Բնականաբար, իր անդրանիկ՝ «Արյունոտ անուրջներ» ժողովածուում տեղ գտած գործերին բավականին քաջածանոթ եմ հենց ռադիոեթերից: Պատմվածքների հիմնական թեման Արցախյան պատերազմն է, որն իբրև երկրի ճակատագիր՝ այստեղ ապրողներից յուրաքանչյուրի համար սահմանել է փորձությունների իր բաժինը: Դեռ ղինակի երիտասարդ տարիքը չի խանգարում հասուն գրիչ ունենալուն և ասելիքն ամբողջացնելուն, քանզի նա, որպես հաջողության գրավական, ապավինել է նրանց փորձին, վաստակին, ում սիրում է, հենց իր մտերիմների հայացքով է ընդգրկել իր տողի սահմանը, միաժամանակ նրանց դարձրել իր հերոսները, իր պատկերած աշխարհը հյուսել նրանց իրականացած կամ էլ անուրջի թև դարձած երազվածքներից: Ու չի մոռացել նրանցից առած դասը. կյանքի վայրիվերումներում աչքի լույսի պես պահել սեփական արժանապատվությունը և չկորցնել սրտի ու մտքի իմաստնությանը հավատա-

լու խորհուրդը: Եվ որ ամենակարևորն է, հող հայրենիի շունչը խառնել իր օրաբաժին հացին, ջրին, որ հազար ու մի ավեր տեսած այս հողակտորի վրա իր տողով էլ արմատ ձգի ոչ միայն խաղաղությունը պահպանելու, այլև այն հավերժական դարձնելու հաստատակամությունը: Ասել է թե՛ Արցախն է Վան Նովիկովի պատմվածքների գլխավոր հերոսը:

Չենք կարող չնշել, որ բարձր բարոյական սկզբունքն է նրան առաջնորդում, որը և հենքն է այսօր դեռևս իր առաջին քայլերն անող երիտասարդ արձակագրի գեղագի-

ներկայացնում են այսպես. «Վանիկը՝ ռուս, բայց լավ հայ տղա է»: Այս ամուր, պարսպաման խոսքում չի կարող անգամ ասեղի ծայրի չափ ճեղքվածք փնտրել նույնիսկ ամենամեծամիտը, քանզի Վան Նովիկովն իր պատմվածքներով հենց իր սիրելի երկրին է խոսք ուղղում՝ զավակի սիրով ու իրավունքով:

Ժողովածուում տեղ գտած պատմվածքների շարքը՝ «Կարմիր ծաղկի առասպելից» մինչև «Կյանքի ճանապարհը», Արցախյան գոյապայքարի այս կամ այն դրվագի զեղարվեստական նկարագիրն է: Հայերիս համար շատ կորստաբեր ու միաժամանակ պատվաբեր Արցախյան գոյապայքարն է դարձել նրա արձակի առանցքը, ասել է թե՛ մեր ժողովրդի ցավի և հպարտության արժարձումը նաև իր սրտի մրմուռն է և ուրախությունը, և իր ասելիքը մեզ՝ իր մերձավորներին է նվիրել որպես սպեղանի և գոտեպնդում, իր տողի լուսեղեն հետագծով ամրագրելով հաղթանակը:

Գրքույկի երկրորդ մասը կազմված է երգիծական պատումներից: Վան Նովիկովը, մեկտեղ ներկայացնելով պատերազմի թեմայով գրված պատմվածքները և երգիծական պատումները, ինքնին ընթերցողին կյանքի ուղի է առաջնորդում այն պարզ հիշեցումով, որ կյանքում փոխեփոխ են վիշտն ու ուրախությունը: Երգիծելու նուրբ արվեստն արդեն ընկերացել է նրան, և այն դիտողունակությունը, որն ընկերական շարժը ընթացքի մեջ դարձնում է ֆելիետոն, յուրատիպ է՝ ամբողջացնելու նրան ստեղծագործության մեջ: Հուսանք և սպասենք նրա նոր գործերին:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



տական հայացքի: Իր հոգում և իր ասելիքում հայ և ռուս ժողովուրդների ազնվագույն հատկանիշների սինթեզն է, որը որպես ստեղծագործող՝ ներկայացնում է նոր որակով՝ այն հավասարապես տարածելով իրեն սնող երկու ակունքներից, պարտքի ու պատասխանատվության զգացումը պահելով այն երկրի հանդեպ, ուր ապրում է և իր հայրենիքն է համարում: Հաճախ կատակով նրան՝ իմ կրտսեր գործընկերոջը,

ԽՈՍՔ ԶՆՈՐԱԿՈՐԱՆՔԻ



Բոլորեց խաչմաշի Շ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Սերոբ Մնացականյանի 50 տարին: Տարիք, որ հասուն երիտասարդության և նոր, ակտիվ կենսադիրքի ճանապարհն է նախանշում:

Ծնվել է 1963թ. նոյեմբերի 25-ին: 1986թ. ավարտելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի «ԸՏՏ և ֆիզիկա» բաժինը՝ աշխատանքի է անցել հայրենի գյուղի ութամյա դպրոցում՝ որպես ուսուցիչ, իսկ 1987-ի նոյեմբերից առայսօր կրթօջախի տնօրենն է:

Ս. Մնացականյանը ոչ միայն լավ մանկավարժ է, դպրոցական գործի հմուտ կազմակերպիչ, այլև հեղինակություն համայնքում: Առանց նրա հեղինակավոր կարծիքի գյուղում չի կազմակերպվում և ոչ մի միջոցառում:

2009թ. սեպտեմբերի 19-ից հասարակական հիմունքներով ղեկավարում է «Խաչմաշ» հիմնադրամը, որը մեծ բարեգործություններ է կատարում գյուղում: Ս. Մնացականյանն իր անմիջական մասնակցությամբ և խորհուրդներով օգնում է գյուղի զարգացման և բարեկարգման աշխատանքներին:

Խաչմաշի հասարակությունը ջերմորեն շնորհավորում է մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործի նվիրյալ, համայնքի հոգաբերող ապրող և իր ուժերն ու կարողությունները նրա բարօրությանը ներդրած ազնիվ մտավորականի 50-ամյա հոբելյանը և մաղթում առողջություն, հետագա հաջողություններ՝ ի շահ հայրենի գյուղի բարգավաճման:

Ասկերանի շրջանի խաչմաշի համայնքի հասարակության կողմից

Դիմանկարի փոխարեն

Վերջերս շատ եմ մտորում կյանքի փիլիսոփայության շուրջ, ինքս ինձ հարցեր տալիս ու փորձում յուրովի գտնել պատասխանները:

Ո՞րն է մարդկային հոգու հավերժության խորհուրդը, այս հարցն ինձ շատ էր հուզում, և ահա բոլորովին վերջերս կարծես թե գտա պատասխանը:

Տարիները գլորվում են ակնթարթի պես: Մենք կորցնում ենք մեզ շատ հոգեհարազատ մարդկանց, որոնց հետ ճաշակել ենք Արցախյան պատերազմի պատճառած վիշտն ու կսկիծը, դառնությունը, սովն ու մթին տարիները, նկուղային կյանքի բոլոր դժվարությունները, մարդկանց, որոնց հետ կիսել ենք վերջին բուռ ալյուրը, սեղմվել իրար՝ լցվելով հույսով, հաղթահարելով մահվան սարսափը, երբ մահաբեր արկերն էին պայթում, երբ թվում էր, թե հենց սա է վերջը...

Ծանոթացանք, երբ Արցախյան շարժումը նոր էր սկսվել: Հնչեց դռան գանգը, երբ բացեցի, ինձ թվաց՝ արև է ճառագայթում դիմաց կանգնած կնոջից (դեղին շրջագծեստով էր, կոկիկ սանրվածքով): Տարիներ հետո հասկացա, որ այդ ջերմությունը հորդում էր նրա բարի հոգուց): Պարզվեց, որ իմ նոր հարևանն է և պիտի բնակվի դիմացի մեկ սենյականոցում: Այդ օրվանից իմ կյանքում փոխվեց ամեն ինչ. նա ներխուժեց իմ տնային մեջ, դարձավ կյանքիս մի մասնիկը: Որտեղի՞ց այդքան բարություն, հոգատարություն, առատածեռնություն և վերջապես՝ մարդասիրություն: Երեկոյան անկողին մտնելուց արդեն մտածում էի՝ ե՞րբ էր բացվելու նոր օրը, որ սուրճի գավաթները ձեռքին ներս

ՀՈԳՈՒ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

եր, ով աշխարհն էր փորձում շալակած տանել:

Հիշում եմ, պատերազմի դաժան օրերն էին, փայտ էինք հավաքում, վառարանը վառում (տղամարդիկ համարյա տան երես չէին տեսնում): Եվ ոչ միայն վառարան վառում, այլև շատ հաճախ մենք էինք փայտ ջար-



դում: Այնպես ստացվեց, որ մի անգամ կացնով կտրեցի բութ մատս, քիչ էր մնում խելագարվելի. եփել-թափել էր պետք, փոքրիկներին ու մեծերին խնամել: Հարմանահարձ այդ կինը սփոփեց ինձ. ամեն օր հաց էր թխում ինձ համար, ճաշ եփում, տուն մաքրում, փոքրիկներին խնամում:

Ամփոփարիների տանտիկին էր, նվիրված ու հոգատար մայր, արժանի զավակ, անկրկնելի ընկերուհի ու հարևան, հասկացող, պարզ ու արդարամիտ ուսուցչուհի: Հաճախ եմ հիշում նրա սրամիտ կատակները, կարծես քայլող հանրագիտարան

լիներ: Երբեք խոսքեր չէր փնտրում, պատասխանները շատ դիպուկ էին ու սրամիտ՝ համեմված հումորով ու կատակով: Կատակում էր նույնիսկ այն ժամանակ, երբ արդեն գիտեր չարաբաստիկ հիվանդության մասին: Երբ մենք նրանից ծածուկ արտասվում էինք, նա, հասկանալով մեր հոգու խռովքը, փորձում էր հանգստացնել մեզ՝ համոզիչ կերպով պնդելով, որ մահն անգոր է իր դեմ: Ո՛ր էր թե...

Վիրահատեցին... Ոչինչ չփոխվեց: Բայց նա շարունակում էր հավատալ և մեզ էլ հավատացնել, որ ամեն ինչ լավ է լինելու:

...Ամառային օր էր, ընտանիքով որոշեցինք մեկնել Բերդաձոր (սկեսրոջս գյուղ), շատ էի ուզում տեսնել այդ վայրերը, առավել ևս՝ նորակառույց եկեղեցին, որը կառուցվել էր իմ եկեղեցու տեղում (Պարին Պիժ, Բարի բժիշկ): Գյուղացիները պատմում էին, որ այդ սրբավայրը մեծ գորություն ունի. չբեր կանանց երեխա է պարգևում, բուժում անբուժելի թվացող հիվանդությունները: Երբ երկյուղածությամբ և հավատքով առաջին անգամ ոտք դրեցի եկեղեցու շենին, որը ծվարել էր բարձունքում՝ իշխելով շրջապատի յոթ գյուղերի վրա, զարմանքից քարացա իմ առջև բացված աննկարագրելի գեղեցիկ ու հիասքանչ տեսարանից... Մոմեր վառեցինք, աղոթքի խոսքեր շնջափցինք առ Աստված, հոգուս խորքում ապաքինում խնդրեցի նաև Նվարդի համար: Երեքով լուռ էինք, մեր մտքերի ու երազանքների աշխարհում: Երբ դուրս եկանք եկեղեցու բակ, նկատեցինք փոքրիկ արահետով

վերև բարձրացող մի խումբ մարդկանց: Երբ նրանք մոտեցան, ես ուղղակի ապշեցի. մեր աշակերտներն էին՝ Նվարդի (նախկին) դասղեկական դասարանը: Նրանք քայլում էին շատ դանդաղ՝ օգնելով հեղինակ, մի կերպ քայլող սիրելի դասղեկին՝ տնային հագուստով, բայց աչքերի յուրահատուկ փայլով, ապրելու հույսով ու հավատով: Բոլորը ոտաբորիկ ներս մտան, մոմեր վառեցին, աղոթքի խոսքեր շնջացին:

Ավա՛ղ... Պարին Պիժը ևս անգոր գտնվեց, Աստված արդեն դրախտի դռները բացել էր Նվարդի առաջ...

Ուղիղ մեկ տարի է՝ դու մեզ հետ չես, տանդ պատերն անգամ բոլորիս համար դարձել են սառն ու անհյուրընկալ: Սիրասուն գավակներդ չեն հաշտվում քո անդառնալի կորստի հետ, նրանց համար ևս օջախիդ լույսը մարել է, տունդ դարձել ցուրտ ու ճնշող:

Բայց կյանքի անիվը համաչափ առաջ է պտտվում, և մենք էլ շարունակում ենք ուրախանալ ու պարել, եթե անհրաժեշտ է, տխրել, լուռ արտասվել, երբ վիշտն է պարուրում մեր հոգիները, կարողոք խելդղում մեր կոկորդը: Գուցե պատճառն այն է, որ դու շարունակում ես ապրել մեր սրտերում, մեր հիշողության ծայրերում: Գուցե հենց դա է հոգու հավերժության գաղտնիքը և հավատը, որ դու մի օր պիտի վերադառնաս...

Հասնիկ ՄԿՐՏՈՄՅԱՆ ԵՊՅ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան Սպեի. ֆիզմաթ հասարակ դպրոցի պատմության ուսուցչուհի

ՎԵՐՋԻՆ ԷՋ

ՎԼՈՐ ՍԵՂԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳԹԱՍՐՏՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆԸ

Օրերս Մարտունու մշակույթի քաղաքային պալատում շրջվարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի կողմից կազմակերպվեց կլոր սեղան՝ նվիրված գթասրտությանը և միասնությանը, որը վարում էր բաժնի վարիչ Անի Խաչատրյանը: Ներկա էին բարձր դասարանների աշակերտներ:

Բացման խոսքում Ա. Խաչատրյանը նշեց, որ գուրջը հատուկ է անգամ կենդանիներին: Եթե մարդուց պակասում է սրտացավությունը, կարեկցանքը, ապա նա դադարում է մարդ լինելուց:

Նա ասաց, որ ժամանակների զարգացման, առաջացած նոր խնդիրների ու պահանջների դրդումով կամաց-կամաց տեղ է տրվում հայի հոգեբանությանն ու մտածողությանը ոչ հարի որ խորք երևույթներին, որի ամենացայտուն արտահայտությունը անտարբերությունն է: Պետք է կարողանալ զգալ ու հասկանալ դրացու ցավը, դժբախտությունը, նեցուկ լինել նրան կյանքի օրհասական, դժվարին պահերին, լինել ուշադիր:

Կլոր սեղանի մասնակիցներն իրենց կարծիքներն արտահայտեցին գթասրտության, մարդասիրության, միասնության վերաբերյալ:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո մեր հասարակությունը սկսեց արժևորել նյութականը, ու մարդն իր նույնիսկ, զգացմունքներով, դիմագծով կախվեց նյութականից: Այս ծակոկ հասարակական շերտավորումը նոր օրենքներ ստեղծեց: Բայց ազգային մտածողությունը, դաստիարակությունն առաջին կարողանում են որոշ չափով հարթահարել օտար երևույթները: Մարդկային ու վեհի մասին դաստիարակությունը պետք է երեխաների շրջանում իրականացվող աշխատանքի հիմքը դառնա: Նրանք ապրում են սոցիալական տարբեր կարգավիճակներով հասակակիցների միջավայրում, որտեղ պետք է լինել նրբակատ, գիտակից, զգայուն: Շատերն ունեն օգնություն կարիք՝ ինչպես նյութական միջոցների, այնպես էլ վերաբերմունքի առումով: Շատ երեխաներ չեն գիտակցում, թե ինչպես են իրենց պահվածքով վիրավորանք ու ցավ պատճառում շրջապատի մարդկանց: Բերեցին բազմաթիվ օրինակներ՝ խղճահարության, ցուցանալության, արհամարհանքի, որոնք կարող են ծանր հետևանքներ առաջացնել:

Խղճի բացակայությունը շատ չարիքների պատճառ կարող է դառնալ՝ նշեց մշակույթի ոլորտի աշխատող Արմինե Ավետիսյանը: Երեխաները համաձայնվեցին, որ դրա բացակայությունն ավելի շատ մարդու թուլությանն է: Սերգեյի կարծիքով՝ ներողամտությունը խղճի ամենամեծ դրսևորումն է, մեծահոգության արտահայտությունը: Այն պետք է օգտագործվի այնպես, որ չերևա իբրև խղճահարություն, ինչն ավելի շատ բացասական երևույթների հիմք կարող է դառնալ, որովհետև շատերն իբրև վիրավորանք և հպարտության ոտնահարում կարող են որակել:

Վալենտինան մարդկային գթասրտության, մարդասիրության վառ օրինակ բերեց երկրաշարժի, պատերազմի տարիներին համայն հայության, աշխարհի տարբեր երկրների քաղաքացիների ներդրումները: Կարևորեց դրանց միասնությունն իբրև մեծ ուժ, քանզի անջատ-անջատ գործելով զուցե և գրանցված արդյունքը չլիներ: Արթուրի պատկերացումը գթասրտության և միասնականության մասին լրացրեց իր ընկերների միտքը: Դրանք պետք է առկա լինեն ոչ միայն դժբախտության, այլև խաղաղ պայմաններում: մարդ միշտ էլ ունենում է դրանց կարիքը, պարզապես մի քիչ այլ արտահայտությամբ: Արտակը մարդասիրություն որակեց այն կարողությունը, երբ քեզ երբեք չես գերադասում քո շրջապատից, քեզ համարում ես նրա մասնիկն ու բոլորին նայում իբրև հավասարի: Ամեն մարդ ունի իր դրական ու բացասական, լավ և վատ կողմերը, կարևոր է դրանք տեսնել ու գնահատել ինչպես քո, այնպես էլ շրջապատի մարդկանց մեջ:

Իբրև գթասրտության և մարդասիրության լավագույն օրինակ Նելլին բերեց Մայր Թերեզայի ապրած կյանքն ու գործունեությունը: Սեր և նվիրում՝ սրանք համարվեցին օրինակելի ու առանցքայինը: Նախնիների պատկերացմամբ՝ միասնաբար միայն կարելի է լինել ուժեղ ու հաջողության հասնել: Լինել դժվարին ու դժբախտության պահին մարդու հետ՝ նշանակում է կիսել նրա ցավը, ավելի մեծ ուժ դառնալ ու հեշտությամբ հաղթահարել: Երբեմն խոսքերն ավելորդ են դառնում, գործի կարևորությունն է առաջնայինը: Մարիամ ընդունեց ընկերների կարծիքները՝ միաժամանակ շեշտելով, որ կարևոր է կարեկցելը և ոչ թե խղճահարությունը: սրանք տարբեր բաներ են: Սեկ այլ լրացում հարցին ուներ Յայկը. անտարբերությունը ծնում է շատ չարիքներ, և ուշադիր վերաբերմունքը կարող է փրկարար դառնալ տարբեր իրավիճակներում: Թուլությունը մարդկային կամքի բացասական դրսևորում է, որը հարգանքի արժանի չէ՝ սա էլ Մարտի կարծիքն էր: Նա բերեց Գոգոլի «Շինելը» ստեղծագործության գլխավոր հերոսի օրինակը: Մարդ պետք է բոլոր պարագաներում լինի ուժեղ, ունենա պայքարելու կարողություն, չհանձնվի ու չհանդուրժի կյանքի հարվածները: Մարդկային այնպիսի արժեքներ կան, որոնք չեն կարող զնել՝ այն կամ ի ծնե ունենում ես, կամ չես ունենում: Մարդ մնում է մարդ՝ հարուստ լինի նա, թե աղքատ: Աստված բոլորին հավասար է ստեղծել, ուստի մենք բոլորս հավասար աչքով պիտի նայենք միմյանց, որն անպայման կերպի և՛ գթասրտության, և՛ մարդկային լավագույն հատկանիշների դրսևորման՝ սա էլ Յասմինի կարծիքն էր:

Բավականին հետաքրքիր կարծիքներ ու մտտեցումներ հնչեցին, ու որերորդ անգամ համոզվում ենք, որ շատ բան ունենք մեր երեխաներից սովորելու:

Կարինե ՂԱՂԱՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Մրցույթ ուսուցչի թափուր տեղի համար

Ստեփանակերտի հ. 9 հիմնական դպրոց - ինֆորմատիկա՝ 7 ժ.:

Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոց - զինդեկ՝ 1 հաստիք:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր, ըստ ԼԳԿ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 25-26 համարում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- 1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիմում) «Հանրակրթության մասին» ԼԳԿ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ԼԳԿ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան դեկտեմբերի 23-27-ը ընկած ժամանակահատվածում: Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

Հայտարարվում է մրցույթ՝ ԼԳԿ Մարտակերտի և Շահումյանի շրջանների ներքոհիշյալ գյուղերի դպրոցների ուսուցչների թափուր տեղերի համար

Մարտակերտի շրջան

1. Աղաբեկլանցի հ/դ - զինդեկ՝ 0,5 դրույթ:

Շահումյանի շրջան

- 1. Նոր Բրաջուրի մ/դ - զինդեկ՝ 1 դրույթ, դասավար՝ 22 ժամ, ֆիզիկա՝ 10 ժամ:
2. Նոր Գետաշենի մ/դ - քիմիա, կենսաբանություն՝ 11 ժամ, պատմություն՝ 12 ժամ, օտար լեզու (անգլերեն)՝ 12 ժամ:
3. Դաղիվանքի մ/դ - օտար լեզու (անգլերեն)՝ 10 ժամ, քիմիա, կենսաբանություն՝ 11 ժամ, ֆիզկուլտուրա՝ 12 ժամ:
4. Եղեգնուտի մ/դ - ֆիզիկա՝ 13 ժամ, աշխարհագրություն՝ 8 ժամ, Հեպ՝ 6 ժամ:
5. Զուարի մ/դ - ռուսաց լեզու՝ 11 ժամ:
6. Նոր Էրեջի մ/դ - զինդեկ՝ 1 դրույթ, աշխարհագրություն՝ 8 ժամ, ռուսաց լեզու՝ 16 ժամ, դասավար՝ 20 ժամ, քիմիա, կենսաբանություն՝ 14 ժամ, ֆիզկուլտուրա՝ 15 ժամ:
7. Նոր Խարխափուտի հ/դ - դասավար՝ 20 ժամ, պատմություն՝ 20 ժամ:
8. Ծարի հ/դ - մաթեմատիկա, ֆիզիկա՝ 7 ժամ, աշխարհագրություն, պատմություն՝ 8 ժամ, հայոց լեզու՝ 11 ժամ, քիմիա, կենսաբանություն՝ 4 ժամ:
9. Հավաքաղի հ/դ - օտար լեզու (անգլ.)՝ 8 ժամ, քիմիա, կենսաբանություն՝ 8 ժամ, ռուսաց լեզու՝ 14 ժամ, զինդեկ՝ 0,5 դրույթ, ֆիզկուլտուրա՝ 9 ժամ:
10. Նոր Ղարաչինարի մ/դ - զինդեկ՝ 1 դրույթ, ֆիզիկա՝ 9 ժամ, պատմություն՝ 6 ժամ, աշխարհագրություն՝ 8 ժամ:
11. Նոր Մանաշիղի հ/դ - ֆիզիկա, ինֆորմատիկա՝ 11 ժամ, աշխարհագրություն՝ 7 ժամ, պատմություն՝ 12 ժամ, օտար լեզու (անգլերեն)՝ 12 ժամ, ռուսաց լեզու՝ 16 ժամ:
12. Չարեքտարի մ/դ - ֆիզիկա, ինֆորմատիկա՝ 11 ժամ, աշխարհագրություն՝ 8 ժամ, դասավար՝ 22 ժամ, մաթեմատիկա՝ 19 ժամ, օտար լեզու (անգլերեն)՝ 14 ժամ, ֆիզկուլտուրա՝ 15 ժամ, դասավար՝ 20 ժամ:
13. Նոր Վերինշենի մ/դ - ինֆորմատիկա՝ 6 ժամ, մաթեմատիկա՝ 28 ժամ, օտար լեզու (անգլերեն)՝ 16 ժամ, դասավար՝ 20 ժամ:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր, ըստ ԼԳԿ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 25-26 համարում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- 1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիմում) «Հանրակրթության մասին» ԼԳԿ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան՝ որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ԼԳԿ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթները տեղի կունենան դեկտեմբերի 15-ից 18-ը ընկած ժամանակահատվածում. տեղի, ժամի և այլ տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

ԼՈՒՍԱՐԱՐ Ի տեղ խմբագրի՝ Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 30.11.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: